

«Անի»-ի մայրաքաղաք հռչակելու 1040-ամեակի առիթով

Պատմիչներն Անին անուանել են «մեծ», «տիեզերական»։ Այդ անուններին Անին արժանացել է իր հոյակերտ կառույցներով՝ պալատներով, տաճարներով, կամուրջներով... Թէև աներակ, բայց այսօր էլ Անին հիասքանչ է։ Քաղաքը փուսած է Ախուրեան գետի աջ ափին, բարձր սարահարթի վրայ, Գիւմրիից 30 կմ հարաւ արեւմուտք՝ Հայաստան-Թուրքիայի սահմանի մօտ, Թուրքիայի տարածքում։ Ախուրեանի ձախ ափից պարզ երևում են կիսաքանդ շինություններ՝ տաճարներ, եկեղեցիներ, աշտարակներ, պարիսպների ու բերդերի մնացորդներ, որոնք հայ միջնադարեան ճարտարապետութեան հոյակապ նմուշներ են։

961-ին Բագրատունիներն արքունիքը Կարսից փոխադրել են Անի եւ այն հռչակել մայրաքաղաք։

Թշնամիների յարձակումից եւ թափառական ցեղերի արշաւանքներից քաղաքը պաշտպանուած է եղել երկու անբաւար կարիսպներով, որոնք կառուցող արքաների անուններով կոչուել են Աշտուաշէն եւ Սմբատաշէն։ Այժմ պարիսպները մեծ մասամբ քանդուած են։ Այնուամենայնիւ եղածն էլ քաւական է պատկերացնելու, թէ ինչ հզօր ու անառիկ էին դրանք կանգուն ժամանակ։ Պարիսպները երկու երեսից շարուած են սքբատաշ քարով, ունեն քանդակներ, արձանագրութիւններ։ Աւագ դռան վերեւում վազող յովազի քանդակն է՝ Անի քաղաքի զինանշանը։

Անի քաղաքը 40 դուռ է ունեցել, իւրաքանչիւրը՝ իր անուրը։ Կարսի դուռ, Դւնոյ կամ Երեսանի դուռ, Աւագ դուռ, Իգա-ձորի դուռ, Շախմատաշար դարպաս, Գայլաձորի դարպաս...

Անին ապրել է վերելքներ եւ վայրէջքներ։ Ծաղկում շրջանում 100 000 բնակիչ է ունեցել։ 989 թականից մինչեւ 1020 թ. հայոց թագաւորը Գագիկ Առաջինն էր։ Երեսուներկ տարւայ այդ խաղաղ ժամանակահատուածում Անին անելի շէնացաւ ու ճոխացաւ։ Կառուցուեցին հոյակերտ Մայր տաճարը, Գագիկաշէն, Աբուղաւմբենց եկեղեցիները, պալատներ, հիւրատներ ու իջեւանատներ... Հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցիին Անին անուանել է «ժազար ու մէկ եկեղեցիների քաղաք»։ Եկեղեցիների ու տաճարների պսակը Մայր տաճարն է։ Նրա հեղինակը մեծատաղանդ *Տրդատ* ճարտարապետն է, որի հռչակը ժամանակակից դուրս էր եկել Հայաստանի սահմաններից։ Ախուրեանի ձախ ափից պարզ երևում է կիսաւեր տաճարի սիւնազարդ եւ կամարազարդ ճակատը։ Տաճարի դիրքը հանդիսաւոր է, վեհ։ Նրանից դէպի ձախ, բլրի վրայ, միջնաբերդն է։ Շատ քիչ բան է մնացել, պարզ գծագրում է միայն երեք կամար։

Անիի տաճարներն ու պալատներն ունեցել են շքեղ մուտքեր՝ ներսից գարդարուած գունագեղ որմնանկարներով։ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կիսաքանդ պատերին մինչեւ այսօր էլ պահպանուել են որմնանկարները։ Ըոխ քանդակներով ու նկարներով այդ եկեղեցին ստացել է Նախշազարդ անուրը։

Անիում զարգացած են եղել մօտ չորս տասնեակ արհեստներ՝ շինարարական, մետաղագործութիւն, գորգագործութիւն, դիպակագործութիւն, ջուլիակութիւն, բրուտագործութիւն, ոսկերչութիւն եւ այլն։

Անին միջնադային խոշոր առեւտրական ճանապարհների հանգուցակէտ էր։ Անեցի վաճառականները առեւտուր էին անում Բիզանդիայի, Պարսկաստանի, արաբական երկրների, Հարաւային Ռուսաստանի եւ Միջին Ասիայի, Չինաստանի, Հնդկաստանի հետ։ Աշխարհով մէկ տարածուած էր անեցի արհեստագործ վարպետների հռչակը, որոնց ար-

տադրանքը զանազանում էր ճաշակով, գեղեցկութեամբ եւ որակով։

Քացի սովորական դայրոցներից, Անին ունեցել է նաեւ բարձր տիպի դայրոց, որտեղ դասաւանդուել են բժշկագիտութիւն, բնագիտութիւն, մաթեմատիկա, փիլիսոփայութիւն եւ այլ առարկաներ։ Անին եղել է հայ գրչութեան կենտրոն։ Երեսանի Մատենադարանում պահուում են Անիում գրուած ձեռագիր գրքեր, որոնք աչքի են ընկնում գունագեղ մանրանկարներով եւ փղոսկրէ ու արծաթէ զարդաքանդակ կազմերով։ 10-11-րդ դարերում Անիում գործել է արքայական գրադարան։

Անին ունեցել է քարանձաւային թաղեր։ Քարանձաւներն օգտագործել են նաեւ որպէս գորանոցներ ու զինանոցներ։ Անիի քարանձաւային բնակարանները թաքստոց են ծառայել թշնամիների յարձակումների ժամանակ։ Քարանձաւների մեծ մասն այժմ փլուած է։

Անեցիները շատ էին սիրում իրենց քաղաքը եւ հերոսաբար մարտնչում էին նրա անկախութեան եւ ազատութեան համար։ Տարբեր դարերում Անիի վրայ են յարձակուել բիւզանդացիները, սելջուկեան թուրքերը, մոնղոլ-թաթարները։

1042թ. հայոց բանակը սպարապետ Վահրամ Պախլաւունու զլխաւորութեամբ պարտութեան է մատուել Անին նւաճել փորձող բիւզանդացիներին եւ Անիում թագաւոր օծել տասնութամեայ Գագիկին։ Թագադրումից երկու տարի անց Գագիկ երկրորդը ճակատամարտ է մղել բիւզանդական զօրքերի դէմ եւ նրանց ջախջախել Անիի պարիսպների տակ։ Հայ պատմիչ Արիստակէս Լաստիւերացին գրում է, որ հայոց բանակը 1042-1045 թականներին եւս երեք անգամ ջախջախել է Անին նւաճելու եկած բիւզանդական մեծաքանակ բանակները։ Իր գոյութեան ընթացքում Անին շատ յաղթանակներ ու պարտութիւններ է տեսել։ 12-րդ դարում քաղաքը մի քանի անգամ ձեռքից-ձեռք է անցել։ Քայքայուել ու աներուել է Լենկ Թեմուրի արշաւանքների ժամանակ (14-րդ դար)։ Նւաճողներից մէկը՝ Չարմաղան գորպարը, ապշել է քաղաքի վայելչագեղութիւնից։ «Մպանեցէք բոլորին,- հրամայել է նա,- բացի արհեստաւորներից»։ Եւ նա գերեւարել է հազարաւոր արհեստաւորների՝ մոնղոլական տիրոջների խորքերում նըրանց ձիքերն օգտագործելու համար։

14-րդ դարում մոնղոլական եւ թուրքական ցեղերի պարերարակ արշաւանքներն այն աստիճան հիւժեցին քաղաքը, որ բնակիչներն աստիճանաբար լքեցին այն ու գաղթեցին օտար ափեր՝ Վրաստան, Գրին, Լեհաստան, Կոստանդնուպոլիս... Անեցիներն ուր էլ որ բնակուեցին, կառուցեցին տներ, եկեղեցիներ, արհեստանոցներ ու վաճառատներ, հիւնեցին դայրոցներ ու գրչութեան կենտրոններ։ Իրենց աշխատարիւթեանը եւ կառուցողական արւեստով նրանք արժանացան ուրիշ ժողովուրդների համարակնքին, դրանով եւս բարձր պահեցին հայոց մայրաքաղաք Անիի անցեալի փառքը։

Անին միջնադարեան Հայաստանի ամենալաւ ուսումնասիրուած քաղաքներից է։ Պեղումները հնարաւորութիւն տուեցին պարզել քաղաքի ընդհանուր պատկերը, փողոցների համակարգը, ջրմուղի հիմնական ուղղութիւնները։ Բացուեցին հնագոյն պարիսպները, հրապարակները, բնակելի թաղամասերը, հիւրատները, կործանուած բազմաթիւ եկեղեցիներ, հարուստների շքեղ ապարանքներ, հասարակ ժողովրդի հիւղակներ, արհեստաւորների գործատներ։

Անիի հերոսական պատմութիւնը ներշնչանքի աղբիւր է եղել հայ գրողների համար։ Նրա մասին գրուել են շատ գրքեր։ ■

Իրանահայ Համայնք

Ս Թաղի վանքը իր գիրկը *•բացեց հազարավոր հայորդիների և օտարալեզուների համար-*



Ուխտագնացները ինչպես նախորդ տարիները, մեկնելով Ս. Թաղի վանք՝ սոյն թականի յուլիսի 26-28 մասնակցեցին այդ առիթով կազմակերպված ծրագրերին: Այս տարի եւօրեայ ուխտագնացութիւնը նախագահում էր Անթիլիասից ժամանած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ընդհանուր փոխանորդ՝ գերաշնորհ Տ. Արտաւազդ Արք. Թրքրռեանը:

Օրայ խորհուրդը քարոզեց գերպ. հայր Նշան Ծ. Վարդապետ Թովմուզեանը:

Ուխտագնացութիւնը ինչպես միշտ կազմակերպել է գործադրում էր Ատրպատականի Հայոց թեմի Թեմական Խորհուրդը:

ԻԱՄՄ-ի դաշտահանդէսը *Վարդավառի նւիրած*.- Սոյն թականի յուլիսի 20-ին Ի.Ա.Մ.Մ. Թեքրան-Ղազիին մայրուղու ճանապարհին գտնուող «Չիքգար» անտառային զբոսայգում կազմակերպել էր Վարդավառի նւիրած դաշտահանդէս: Մեծ թով թեքրանահայեր մասնակցել էին միջոցաւմանը, որոնք հաճելի ժամեր անցկացրին՝ մոռացութեան տալով առօրեայ դժարութիւնները:

Դաշտահանդէսի վայրը օժտւած էր բոլոր անհրաժեշտ յարմարութիւններով, այնպէս, որ մասնակցողները որեւէ դժարութեան չհանդիպեցին:

Իրան

Բողոք արտօնած ապրանքների ներմուծումը թոյլատրելի է.- Իրանի Առևտրի նախարարութիւնը ընդունելով վերոյիշեալ որոշումը յայտնեց, որ ապրանքների ներմու-

ծումը պայմանաւորւած է, այդ առընչութեամբ հաստատւած օրէնքների կիրառման հետ:

Նոյն որոշումը կիրառւում է նաեւ ապրանքների արտահանման հարցում եւ որեւէ սահմանափակում քանակի իմաստով գոյութիւն չունի, մինչդեռ նախապէս միայն 54 անուն ապրանքներին արտահանման արտօնութիւն էր տրուում:

Հակահրանական հիստորիա Ադրբեջանում.- Բարձրում լոյս տեսնող «525 գազեթ» թերթը յուլիսի 18-ի համարում գրում է, որ Թաւրիզի բնակչութեանը խիստ զայրացրել է Արեւելեան Ատրպատականի նահանգապետ Եահես Մոհամմադգադէի այցելութիւնը Հայաստան, նախագահ Քոչարեանի հետ հանդիպման ժամանակ նրա արած յայտարարութիւնները: «Թաւրիզի բնակչութիւնը միշտ պատրաստ է եղել Հայաստանի հետ հաստատելու տնտեսական կապեր», նահանգապետի այս խօսքերը մէջբերելով թերթը գրքոյցի է հրատիրում այսպէս կոչւած «Հարաւային Ադրբեջան նախաձեռնող խումբ» կազմակերպութեան (ըզբաղում է հակահրանական քարոզչութեամբ, ծրագրում է Իրանի հիւսիսային շրջանները միաւորել «մայր հայրենիքին») Ադրբեջանի (խմբ.) ակտիւիստներից Ալան Խալիլիին, որը «525 գազեթ» թերթին ասում է. «Այդ գաղափարն իսկ վիրաւորանք է Թաւրիզի ողջ բնակչութեանը: Մոհամմադգադէն Քոչարեանին հրատիրեց Իրան: Օգոստոսին ուզում են Թաւրիզում բացելիք տնտեսական ցուցահանդէսում ներկայացնել Հայաստանը: Քաղաքում բնակող մեր հայրենակիցները եւ ողջ Հարաւային Ադրբեջանի բնակիչները դէմ են ցուցահանդէսում հայերի մասնակցութեանը: Հաւանաբար միջոցներ ձեռք կառնենք: Ղարաբաղի հարցում Իրանն օգնում է Հայաստանին: Իրանը, որ չի սիրում Ադրբեջանին, նրա դէմ լուրջ քայլեր է ձեռնարկել: Թեքրանի վարչակազմը գիտի, որ Հարաւային Ադրբեջանում ազգային պայքարը հասնում է զագաթնակէտին: Այս պատճառով Իրանը Հայաստան է ուղարկում ոչ թէ պարսիկ պաշտօնեաների, այլ՝ ադրբեջանցի, ցոյց տալու, թէ իբր Իրանի ադրբեջանցիները կողմ են հայ-իրանական

կապերի ամրապնդմանը: Մի քանի հայկական ընկերութիւններ փորձում են հիմնադրել Հարաւային Ադրբեջանում՝ գործի մէջ դնելով ադրբեջանական գրաւեալ հողերից ստացած «թալանը»:

Ղուրբանովը «Ենի Մուսաւաբում» ասում է. «Նախարարութեանը տեղեկացւած է, որ ադրբեջանցի անփորձ երիտասարդներն անօրինական ճանապարհով մեկնում են Իրան եւ կրօնական կրթութեան անւան տակ ստանում գաղափարական, ռազմական կրթութիւն»:

Իրանը նոր հայեացք է ձգում Կովկասին



Քոչարեանի առաջիկայ պաշտօնական այցը Իրան, անկասկած, շրջադարձային կը լինի երկու երկրների յարաբերութիւններում», յայտարարել է Իրանի Իսլամական Հանրապետութեան ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղար Հասան Ռոհանին հանրապետութեան նախագահի հետ կայացած հանդիպման ժամանակ:

Դրական գնահատելով Իրան-Հայաստան յարաբերութիւնների ներկայ մակարդակը, Ռ. Քոչարեանը վստահութիւն է յայտնել, որ բարձրաստիճան պատիրակութեան այցը նոր քայլ կը լինի երկկողմ յարաբերութիւնների հետագայ զարգացման համար բոլոր բնագաւառներում:

Ռոհանին Հանրապետութեան նախագահին հաղորդել է Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Խաթամիի ողջոյնները: Ընդգրծելով երկկողմ յարաբերութիւնների բարձր մակարդակը, նա միաժամանակ նշել է, որ դեռեւս առկայ է չօգտագործւած մեծ ներուժ: «Երկու երկրների պատմական կապերը եւ տասնամեայ միջպետական յարաբերութիւնները լաւագոյն կապիտալ են համագործակցութեան հետագայ ընդլայնման համար», ասել է նա:

Հասան Ռոհանին տարածաշրջանային անվտանգության եւ կայունութեան ծիրում առանցքային է համարել Հայաստանի տեղն ու դերը: Խօսելով հիւսիս-հարաւ առանցքի կայացման մասին, նա ընդգծել է այդ գործընթացներում Հայաստանի պարտադիր ներգրաւման անհրաժեշտութիւնը: Նախագահ Ռ. Քոչարեանն ասել է, որ տարածաշրջանային անվտանգութեան հետ կապած խնդիրների լուծումն անհնար է առանց Իրանի մասնակցութեան:

Հայաստանի նախագահը իր հերթին ողջունել է Իրանի հաւասարակշիռ դիրքորոշումը դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման հարցում:

Ջրուցակիցները քննարկել են նաեւ տնտեսական փոխգործակցութեան հեռանկարը: Ռ. Քոչարեանն առաջարկել է տնտեսական յարաբերութիւններին մօտեմալ աւելի լայն կտրածքով՝ հիմնական ուշադրութիւնը սեւեռելով ենթակառուցածքների զարգացմանը, ինչը, նրա կարծիքով, նոր խթան կը հաղորդի երկկողմ տնտեսական կապերին:

Կողմերը մեծ նշանակութիւն են տւել նաեւ մշակութային երկխօսութեան ակտիւացմանը:

Հայաստան

Հայ-իտալական արշաւախումբը հետազոտում է Սեւանի աազանի հնադարեան յուշարձանները (Արմէնայքես 17.07.01).Մէկ տարւայ ընդմիջումից յետոյ հայ-իտալական հնագիտական արշաւախումբը վերականգնեց Սեւանի աազանի հնադարեան յուշարձանների հետազոտութիւնները, եւ միանգամից՝ անակնկալ քարի վրայ յայտնաբերել է արամեերէն արձանագրութիւն, որը դեռեւս պէտք է վերծանի:

Ինչպէս նշեց ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր Արամ Քալանթարեանը, արդէն եօթ տարի է, ինչ կատարում են երկու երկրների հնագէտների համատեղ հետազոտութիւններ:

Իտալացի յայտնի հնագէտ Ռաֆայէլ Բիչիոնէն մեծ յոյսեր է կապում նաեւ ներկայիս աշխատանք-

ների հետ, որոնք Գաւառի շրջանում կը տեսնեն մի քանի ամիս: Ըստ նրա, Հայաստանի եւ Իտալիայի գիտնականների հետազոտութիւնների արդիւնքներով կը կազմի Սեւանի աազանի յուշարձանների հնագիտական քարտէզ:

2 միլիոն մարկ՝ Միւնիքիւն. - Գերմանիայի Դաշնային Հանրապետութիւնն անհապաղ օգնութեան միջոցառումների ծրագրի շրջանակներում 2 մլն գերմանական մարկ է տրամադրել Միւնիքի մարզում քանդած ենթակառուցածքների, դպրոցների եւ մանկապարտէզների վերականգնման, ինչպէս նաեւ փախստականների ինտեգրացման ծրագրի իրականացման աջակցելու նպատակով: Ծրագրում է համայնքների, համայնքային միութիւնների, մարզային իշխանութիւնների, ինչպէս նաեւ տեխնիկական համագործակցութեան գերմանական ընկերութեան հետ համատեղ նախատեսւած միջոցառումներն աւարտել մինչեւ սոյն տարւայ վերջը: Ընդհանուր առմամբ իրականացում են մօտ 100 տարբեր նախագծեր:

Հռոմի պապը Հայաստան կը ժամանի սեպտեմբերի 25-ին. - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոբերտ Քոչարեանի հրաւերով սեպտեմբերի 25-ին Հայաստան կը ժամանի Հռոմի սրբազան քահանայապետ Յովհաննէս Պողոս II-ը՝ քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելու 1700-ամեակին նիւրած տօնակատարութիւնների կապակցութեամբ:

Սրբազան քահանայապետը կիջեւանի Մայր աթոռ Սր. Էջմիածնում, կայցելի Ծիծեռնակաբերդ, Երեւանի նորակառոյց Սր. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցի, Խոր Վիրապ, պատարագ կը մատուցի Մայր աթոռի բաց խորանին, հանդիպում կունենայ ՀՀ նախագահ Ռ. Քոչարեանի հետ:

Հռոմի պապը սեպտեմբերի 27-ին կը վերադառնայ Հռոմ՝ Խոր Վիրապից իր հետ տանելով Սր. Գրիգոր Լուսավորչի կանթեղի յայը:

Բաշար Ասադը Ռոբերտ Քոչարեանին հրաւիրել է Միդիա. - Նախագահ Ռոբերտ Քոչարեանը



ընդունել է պաշտօնական այցով Հայաստանում գտնող Միդիայի Արաբական Հանրապետութեան Ժողովրդական ժողովի նախագահ Աբդել ալ Կադեր Կադուրայի գլխատրած պատիրակութեամբ:

Ռ. Քոչարեանը բարձր է գնահատել հայ-սիրիական երկկողմ գործակցութիւնը եւ Միդիայի առանձնատուկ դերը արաբական աշխարհի հետ յարաբերութիւնների համատեքստում: Նախագահի խօսքով, այն համակրանքը, որ երկու երկրներն ու ժողովուրդները տաժում են միմեանց նկատմամբ, հիմնւած է պատմական արանդրթների վրայ: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանայ 1915թ. եղեռնից յետոյ Միդիայի բացառիկ դերը մեր ժողովրդի կեանքում:

Աբդել ալ Կադեր Կադուրան իր հերթին ասել է, որ Միդիան Հայաստանը դիտում է բարեկամ երկիր եւ ցանկութիւն ունի առաւել ընդլայնել եւ խորացնել երկկողմ համագործակցութիւնը:

Ջրուցակիցները հայ-սիրիական յարաբերութիւնների զարգացմանը նպաստող էական գործօն են համարել սիրիահայ համայնքը, որը լիովին ինտեգրւել է երկրի կեանքում եւ իրեն զգում է լիարժէք քաղաքացի:

Աբդել ալ Կադեր Կադուրան իր երկրի նախագահ Բաշար ալ Ասադի անունից հրաւիրել է Ռ. Քոչարեանին պաշտօնական այց կատարելու Միդիա:

Միջազգային

Արդրեջանում նաթ չի յայտնաբերուում. - Արեւմտեան նաթային ընկերութիւնների անյաջողութիւնները շարունակւում են. երկրորդ Քովէթ կոչւած Արդրեջանում նաթ չի յայտնաբերուում: Agip Azerbaijan B. V ընկերութիւնը (բաժնետէտերն են՝ Agip՝ 25 տոկոս, Mitsui՝ 15, TPAO-

5, Repsol` 5, SOCAR` 50 տոկոս) «Քիրոպաշի» հանքավայրում չգտաւ տնտեսապէս շահաւէտ մաթի պաշարներ: Մի քանի օր առաջ Agip-ը 4061 մետր փորելուց յետոյ մաթ չէր յայտնաբերել «Արագ-Ռենիզ» հանքավայրում: «Թրենդ» գործակալութիւնը նշում է, որ շուտով ընկերութիւնը կորոշի՝ շարունակել, թէ՞ դադարեցնել մաթի որոնման աշխատանքները: Ադրբեջանի պետական մաթային ընկերութեան՝ SOCAR-ի ներկայացուցիչների կարծիքով, չըպէտք է յուսահատուել, այլ շարունակել հորատման աշխատանքները, որովհետեւ «փորձը ցոյց է տալիս, որ 10 հորանցքերից 1-2-ն են լինում արդիւնաւետ»:

Արամ Ա-ն ոչ թէ պիտի քննարկէր, այլ՝ աղբարկողը նետեր քաղաքացի Ղազարոս Կիրեղեանի դիմումը (Ազգ օրաթերթ 17.07.01). - Մեծի տանըն Կիլիկիոյ կաթողիկոսարանի դիւանը տարածել է հաղորդագրութիւն, որտեղ մասնատրապէս ասում է. «Ռուսիոյ հայ համայնքի ազգային-եկեղեցական կեանքէն ներս վերջին շրջանին յառաջացած տագնապին որպէս հետեւանք, «Մոսկուայի Հայ Առաքելական Եկեղեցիների Միատրում»ի կողմէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոս 7 յունիս, 2001թ. նամակ մը ստացաւ, ուր կը խնդրուէր Վեհափառ Հայրապետէն, որ «ժամանակատրապէս Մոսկուայի Եկեղեցական Միութիւնը (մօտ ապագային Ռուսաստանի Եկեղեցիներու Միութիւն) ճանաչի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի գերակայութիւնը, կանխելու համար ստեղծմանը Ռուսիոյ Հայ Եկեղեցի Աթոռին»: Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ գումարուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութիւնը քննելէ յետոյ վերոյիշեալ խնդրանքը, մերժեց ընթացք տալ նման առաջարկի մը, Ռուսիոյ հայութեան ամբողջականութիւնը եւ Հայ եկեղեցւոյ ու ժողովուրդին միասնականութիւնը ամուր պահելու նախանձախնդրութենէն մղուած:

Հաղորդագրության մէջ ասում է՝ Արամ Ա-ն գումարել է Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կենտրոնական վարչութեան միստ, որպէսզի քննարկի՝ ընթացք

տա՞լ քաղաքացի Ղազարոս Կիրեղեանի (որ նոյն ինքը Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի նախկին թեմակալ առաջնորդ Տիրան արք. Կիրեղեանն է) դիմում-խնդրանքին: Տեղեակ չէ՞ Արամ կաթողիկոսը, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն անկարգութիւնների եւ անհնազանդութեան համար կարգալոյծ է արել Տիրան արք. Կիրեղեանին: Ինչո՞ւ է Արամ Ա-ն կարեւորում, աւելին՝ քննութեան առումն քաղաքացի Ղազարոս Կիրեղեանի դիմումը, այն նոյն Ղազարոսի, որին հաւատարիմ յանցագործները Հայոց հայրապետի կողմից թեմակալ առաջնորդ նշանակւած Եզրաս վարդապետ Ներսիսեանին Մուրք Չառիկի օրը թոյլ չեն տալիս եկեղեցի մտնել՝ իր հոգեւոր առաջնորդի պարտականութիւնները կատարելու: Տեղեակ չէ Ղազարոսի այլ անկարգութիւններին: Մեր կարծիքով, Արամ Ա-ն ոչ թէ պիտի քննարկէր, այլ աղբարկողը նետեր դիմումը:

Ցեղասպանութեանը նիւրած յօդածների համար Ռոքերտ Ֆիսքն արժանացաւ մրցանակի. - Հայոց եւ այլ ժողովուրդների ցեղասպանութեան մասին անգլիական «Ինդիփենդենտ» թերթում ստորագրած վերլուծական յօդածների համար անգլիացի յայտնի լրագրող եւ Միջին Արեւելքում վերոյիշեալ թերթի թղթակից Ռոքերտ Ֆիսքն արժանացաւ քաղաքական լրագրութեան «Ի.Ե.Ի.Պ.Վաթ» մրցանակին: «Լոյսի» ընթերցողները ծանօթ են «Ինդիփենդենտ» թերթից թարգմանաբար արտատրււած նրա յօդածներին, որոնք հետեւողականօրէն մերժում են Հուլիոսի (հրեաների ցեղասպանութեան) բացառիկութիւնը եւ շեշտում, որ բոլոր ցեղասպանութիւնները, սկսելով Հայոց ցեղասպանութիւնից, կարեւոր են եւ հաւասարապէս արժանի ճանաչման: Պատասխանելով իր թուրք եւ հրեայ ընդդիմախօսներին, Ֆիսքը շեշտում է, որ կարեւորը ցեղասպանութեան զոհերի թիւը չէ բնաւ:

Մրցանակը ստանալու պահին Ֆիսքն ասաց, որ Թուրքիայի կառավարութիւնը կատաղի պայքար մղեց իր դէմ այդ յօդածաշարի առթիւ, սակայն այսպիսի մրցանակները լրագրողներին տալիս են լաւագոյն պաշտպանութիւն:

Իրանի ԱԳՆ-ն բողոքի նոտա է յղել Ադրբեջանի ԱԳՆ («Նոյեան Տապան» 23.07.01). - Իրանի ԱԳ նախարարութիւնը բողոք է յայտնել Ալբորզի շրջանում ծովային մաթավայրերի զարգացման Ադրբեջանի ծրագրերի առնչութեամբ: Իրանական հեռուստատեսութեան հաղորդման համաձայն, բողոքի տեքստը յանձնել է Թեհրանում Ադրբեջանի դեսպանութեանը: Ինչպէս հաղորդում է «Ռէյտեր» գործակալութիւնը, պաշտօնական Թեհրանի յայտարարութեան մէջ ընդգծւում է, որ «Ի-Ի-Ն» թոյլ չի տայ ոչ մի երկրի կամ արտասահմանեան ընկերութեան զբաղւելու մի գործունէութեամբ, որը վնասում է Իրանի ազգային շահերին»:

Ադրբեջանը եւ Թուրքմենստանը պատերազմի են նախապարտատուում (Արմէնպրես 17.07.01). - Բաքուն շարունակում է զգուշանորութեամբ նայել Կասպից ծովի հակառակ ափին, որտեղ եռանդուն ռազմական շինարարութիւն է ծաւալւել, գրում է «Բիլիք դունեսաի» գործակալութիւնը: Թուրքմենստանի հետ Ադրբեջանի յարաբերութիւնները վատացան, երբ Բաքուն 1994թ. ձեռնամուխ եղաւ ծովի մաթային հանքավայրերի իւրացմանը: Դա գրգռեց Աշգարադին, որը հաւակնում է Ադրբեջանի կողմից արդէն իւրացուող մի ամբողջ շարք հանքավայրերի: Կասպից ծովի թուրքմենական հատումն սկսեցին ռազմածովային վարժութիւններ, եւ Թուրքմենստանի ըսպատազիմութեան մէջ յայտնեցին արտասահմանեան մարտական կատերներ: Բացի այդ, Թուրքմենստանը յայտնեց իր մտադրութիւնը՝ «Ռոսօբորոնէքսպորտի» հետ համաձայնագիր ստորագրելու ռուսաստանեան արտադրութեան ռազմական տեխնիկայի մատակարարումների մասին: Վրաստանի ալիաշինական գործարանում արդիականացում են Թուրքմենստանի Մու-25 ինքնաթիռներ: «Թրիլաիաշին» արդէն նորոգել են Թուրքմենստանի 18 մարտական ինքնաթիռ, նորոգելու են եւս 22-ը: Իսկ Ադրբեջանում վերջերս տեղի ունեցան զօրախաղեր՝ բոլոր զօրատեսակների մասնակցութեամբ: Պաշտպանութեան նախարարը Բանակի օրը յայտարարեց, թէ զինւած ուժերը կը կատարեն ցանկացած առաջադրանք: ■

Յովհ. Թումանյանը Հայաստան-սփիւրջարարերութիւնների ակունքների մօտ

Կարլեն Դալլաբեան

(Շար. նախորդ համարից)


Թումանյանի Պոլիս ժամանելու պահին Ռ-Ս կուսակցութիւնը հէնց նորերս էր ստեղծել (հոկտեմբերի 1-ին տեղի ունեցաւ միաւորիչ ակտը), եւ բանաստեղծի ներկայութիւնը լաւագոյն առիթ եղաւ՝ Հայաստանին իր օգնութեան կերպը եւ միջոցը պարզելու համար: Որոշուեց Յովհ. Թումանյանի պատիւին թէյասեղան տալ: «Թէյասեղանը առիթ մը պիտի նկատուի յարգանք մը մատուցանելու բանաստեղծին եւ համակրանք՝ Հայաստանի օգնութեան իր առաքելութեանը», գրած է Կենտրոնական վարչութեան համապատասխան որոշման մէջ: Թէյասեղանը տրուել է նոյեմբերի 10-ի երեկոյեան Թոքսթլեան սրահում, Վահան Թեքէյեանի նախագահութեամբ: Թումանյանն իր խօսքի մէջ դարձեալ շեշտել է ազգային միասնութեան անհրաժեշտութիւնը եւ կենսական կարեւորութիւնը:

«Ձեր միութիւնը բարոյական մեծ ուժ մըն է Հայաստանի ժողովուրդին համար: Երբ հոն լուր եկաւ, թէ հոս Պոլսոյ մէջ հայ հոգեւոր պետերն ի մի խմբւած են եւ կազմուած է համազգային մարմին մը օժանդակութեան հասնելու համար Հայաստանի, այդ օրը մեր տան մէջ երկու լռեցիկներ կը խօսակցեին իրարու հետ: Անոնցմէ մին դարձաւ միւսին եւ ըսաւ.- ի՞նչ, հապա կը կարծէիր, որ մենք անտէ՞ր ենք:

Ձեր միութիւնը ջերմութիւն մը տուաւ անոնց, եւ վստահ եմ, թէ Հայաստանի բոլոր ժողովուրդն ալ տաքցած է ձեր միութիւնով: Այդ համոզումը տուիք ինձի այսօր եւ անոր համար կը յայտնեմ ուրախութիւնս»: Այսպէս հրապարակել է Պոլսի «Վերջին լուր» թերթն, իր նոյեմբերի 11-ի համարում:

Դեռեւս ՀՕԿ-ի կազմաւորման օրերին Հայաստանում քիչ չէին «գաղափարախօսական բազէները», որոնց սրբատուր չէր սփիւրջահայութեան հետ յարաբերութիւնների անկուսակցական, ապադասակարգային, ազգային բնոյթը: Արդէն սեպտեմբերի 25-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթի մի խմբագրականում զգուշացնում են, թէ «նոր կոմիտէն... պարտաւոր է հաշի առնել թէ մեր հայրենիքի սահմանադրութիւնը եւ թէ նրա ուրոյն քաղաքական կացութիւնը: Այնինչ հէնց այդ կողմի վրայ հայ մտաւորականները շատ քիչ են ուշադրութիւն դարձնում: Մի քանի շրջաններում տրամադրութիւն կայ սովետական ժողովրդի անունով հաւաքած դրամը գործադրել միջնադարեան ինստիտուտների կենդանացման համար: Այլ խօսքով՝ հայ որբերի եւ սովետների օգնութեան գործը դառնում է քաղաքական նոր էսքայլատացիայի գործ: Դրա հետ մեր իշխանութիւնը չի կարող հաշտուել երբեք: Կեղծաւոր «օգնականներ» պէտք չեն»:

Նոյնիսկ Ալ.Մեանցիկեանի հեղինակութիւնը, յաճախ, չէր զսպում այդ «բազէները» ախորժակը: Նրանցից մէկը՝ Սպարտակ կեղծանունով ստորագրած, մի սաղրամբ



տպագրեց, թէ իբր Մեանցիկեանն իշխանութիւնը յանձնել է Յովհ. Թումանյանին:

Բանաստեղծի մահանից յետոյ կարճ ժամանակ անց ՀՕԿ-ն աստիճանաբար հեռացաւ նրա հիմնած սկզբունքից: Առաջին բնագիծ քաշուեց քաղաքական, գաղափարախօսական եւ դասակարգային անհանդուրժողականութիւնը: Խորացաւ սփիւրջի պառակտումը, որը մինչեւ օրս աներներ է գործում մեր հայրենակիցների հոգում: Այ-ժրմ էլ, ուր տասնամեակ անց, միակ ազգաշէն, կենսատու սկզբունքը սփիւրջի հետ մեր յարաբերութիւններում ազ-գային հողի վրայ միասնութեան սկզբունքն է, որի ձեւատրման ակունքի մօտ կանգնած էր Մեծն Թումանյանը: ■

ՏԻՐՈՒՆԻ

«Լոյս» երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- < Տէր Զարեհ Օհանեան
- < Ալիս Գրիգորեան
- < Մանիա Տէր Պօղոսեան (Յովհաննիսեան)
- < Ճարտ. Արամայիս Վարդանեան
- < Վազգէն Զոհրաբեան
- < Էդիկ Մարտիրոս-Փուրեան
- < Ռուբէն Յովհաննիսեան
- < Վանիկ Ամիրեան
- < Երամոյ Կիրակոսեան
- < Յովհաննէս Նազարեան
- < Կայծակ Զեւեգեան
- < Իշխանուհի Գրիգորեան (Բաբունեան)
- < Լորա Յովհաննիսեան
- < Յովհաննէս Աբնուսեան
- < Երանուհի Տէր Սարգսեան
- < Արսէն Սուլէյմանեան
- < Թամար Բարխուդարեան (Սարկոսեան)

Վերջին տասնամեակում Հայաստան առաքւած սփիւռքի մարդասիրական օգնութիւնը

Պատրաստած էր Հայաստան-Սփիւռք
խորհրդատուական կոմիտեի
(22-23 սեպտեմբերի, 1999թ.)
ք. Երևան

Հայաստանի 1998թ. դեկտեմբերի երկրաշարժից սկըսած եւ յատկապէս՝ Հայաստանի 1991թ. անկախութիւնից յետոյ օգնութեան մի հսկայական ներհոսք տեղի ունեցաւ դէպի Հայաստան. առնուած 50 մեծ եւ փոքր կազմակերպութիւններ կան խմբեր ներգրաւել էին Հայաստանում մարդասիրական գործունէութեան մէջ: Մինչ շատ հայկական կազմակերպութիւններ եւ անհատներ աջակցում էին Հայաստանի համար նախատեսուած մարդասիրական ծրագրերին կամ օգնութեանը, այդ օգնութեան ընդհանուր պատկերը եւ ուղղաւորութիւնը միշտ չէ, որ պարզ են: Ո՞րն է մարդասիրական օգնութեան երկարաժամկետ նպատակը, ո՞ր նախագծերն են ընտրուել, ո՞ւմ կողմից եւ ինչո՞ւ, ինչպիսի՞ն է յաջողութեան չափը, որքանո՞վ են կայուն նախաձեռնուած մարդասիրական ծրագրերը: Բարձրացւելիք խնդիրների ցանկը բաւականին երկար է: Պատասխաններն անհրաժեշտ են դարձնում Հայաստանի երկարատեւ կարիքների համապարփակ գնահատումը, ինչպէս նաեւ սփիւռքի Ֆինանսական եւ մարդկային հնարարութիւնները:

Այս զեկոյցը չի ներկայացնում վերջին տասնամեակում Հայաստանին օգնութիւն տրամադրած բոլոր կազմակերպութիւնների կամ անհատների սպառիչ եւ լիարժեք ուսումնասիրութիւնը: Ոչ էլ այն ներկայացնում է ընդգրկուած հարցերի համապարփակ վերլուծութիւնը: Փոխարէնը եւ առաջին հերթին՝ զեկոյցում արծարծուած են Հայաստանին յատկացուած մարդասիրական օգնութեան հետ կապուած հարցերը՝ այն ակնկալիքով, որ համաժողովի կազմակերպիչները նրա աւարտից յետոյ կը կարողանան ձեռնարկել աւելի ամբողջական ուսումնասիրութիւն: Ժամանակի սղութեան պատճառով, զեկոյցում ուշադրութիւնը բեռնուած է 14 խոշոր կազմակերպութիւնների վրայ եւ հնարարութեան սահմաններում՝ վերլուծութեան եւ առաջարկութիւններ տալու նպատակով, կը բերեն որոշ քանակական եւ որակական տուեալներ: Ներդրումների ճշգրիտ ծաւալը հաշւարկելու առկայ ներքին դժարութիւնների պատճառով, այս զեկոյցում ներգրաւուած չեն երկու տասնեակից աւելի այն սփիւռքահայ կազմակերպութիւնները, որոնց օգնութեան ծաւալը տատանում է \$10000-\$100000 սահմաններում: Նման նիւթատրութիւնները պէտք է հաշի առնեն իւրաքանչիւր սպազայ գնահատականի կամ զեկոյցի մէջ:

1. Այս ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ՝

- Չեկոյցում նշուած 14 կազմակերպութիւնները վերջին տասնամեակի ընթացքում Հայաստանին յատկացրել են աւելի քան \$630 միլիոնի օգնութիւն:
- Սփիւռքի կազմակերպութիւններն իրենց կարճաժամկետ ծրագրերում Հայաստանին եւ Ղարաբաղին տրամադրում են երկարաժամկետ օգնութիւն: Կազմակերպ-

պութիւններն իրենց փորձից ելնելով աւելի հակուած են իրականացնելու կարճաժամկետ ծրագրեր, քան երկարաժամկետ, ինչը կը պահանջի երկար տարիների Ֆինանսական եւ մարդկային ռեսուրսների պարտաւորաւորութիւն: Օրինակ՝ երկու սփիւռքահայ կազմակերպութիւն ծրագրում են «սեփականաշնորհել» Երեւանում գտնուող մի հիւանդանոց եւ Էջմիածնի գիւղատնտեսական սարքաւորումները՝ փոխանցելով նրանք ներգրաւուած աշխատողներին (ա) ստեղծելու համար եկամտի աղբիւր աշխատողների համար, (բ) խթանելու աշխատողների եկամուտը (գ) խրախուսելու համար վարձատրող կազմակերպութեանը՝ աւելի անհրաժեշտ նախագծերում մասնակցելու համար:

• Ազգային յատուկ իրավիճակների դէպքում (օր.՝ երկրաշարժը, 1993-94 թթ. Էներգետիկ ճգնաժամը, եւ այլն), սփիւռքահայութեան աջակցութիւնը վերելք է ապրում եւ կենտրոնացում են բոլոր ջանքերը:

• Սփիւռքի խոշոր կազմակերպութիւնները ստեղծել են ենթակառոց՝ նիւթատուների, միջնորդների, իրաւական եւ վարչական միջոցառումների համալիր՝ ցանցի միջոցով կարիքները գնահատելու, Ֆինանսները եւ ապրանքները բաշխելու, օգնութիւնը բաժանելու, ինչպէս նաեւ Հայաստանում կարիքատրներին յայտնաբերելու նպատակով:

• Տարիների ընթացքում սփիւռքի կազմակերպութիւնները քիչ քիչ շատ յաջող էին համագործակցում Հայաստանի կառավարութեան (չհաշուած իրաւական եւ մաքսային ձեւակերպումների հետ կապուած դժարութիւնները), տարբեր նախարարութիւններ, ոչ-կառավարական կազմակերպութիւնների եւ տեղական անկախ կազմակերպութիւնների հետ՝ մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու գործում:

• Մարդասիրական օգնութիւնը կարող է համարուել լուրջ «արդիւնաբերութիւն» (Հայաստանում), նրա հիմնականում անտեսող «հատուած»: Մօտ 2000-3000 ՀՀ քաղաքացիներ (չհաշուած սփիւռքահայերին) ուղղակիօրէն կան անուղղակի կերպով աշխատում են օգնութիւն մատակարարող սփիւռքի կազմակերպութիւններում: Հայաստանում ստեղծել են մեծ քով օգնութիւն կազմակերպող եւ բաշխող հիմնարկներ: Այս «արդիւնաբերութիւնը» եկամտի աղբիւր է ստեղծել քե՛ տեղացի աշխատակիցների եւ նրանց ընտանիքների մի սուար խմբի, եւ քե՛ ընդհանուր առմամբ՝ Հայաստանի տնտեսութեան համար: Բացի այդ, տարիների ընթացքում սփիւռքի կազմակերպութիւնները պատրաստել են կառավարման մասնագէտներ եւ իրենց նախագծերում ներգրաւուած անձնակազմ:

• Վերջին տասնամեակի ընթացքում սփիւռքի կազմակերպութիւններն աստիճանաբար իրազէկ դարձան եւ քիչ քիչ շատ յաջողեցին հաւաքել դրամական միջոցներ եւ «ոչ-Ֆինանսական» (ոչ-կանխիկ ներդրումներ, օր.՝ ապրանքներ եւ մթերք) նիւթատրութիւններ ոչ-հայկական գործակալութիւններից, գերատեսչութիւններից եւ աղբիւրներից: Եւ իրօք՝ զեկոյցում նշուած \$630 միլիոն օգնութեան զգալի տոկոսը, որը առաքել էր սփիւռքի կազմակերպութիւնների կողմից ստացուել է ոչ-հայկական աղբիւրներից՝ որոշ կազմակերպութիւններում՝ 70-90%: Առողջապահութեան բնագաւառում կազմակերպութիւններին նոյնպէս յաջողել է գտնելու աղբիւրներ, որոնց օգնութեամբ բժշկական

Մշակույթ

սարքատրումները ձեռք են բերել շատ ցածր կամ զեղջ գներով: (Նայիր՝ «Dono Fatigue»-ի IV բաժինը)

• Չնայած գոյութիւն ունեցող որոշ համագործակցութեան, սփիւռքահայութեան օգնութիւնը չի իրականացում համակարգում կերպով: Մովորաբար իւրաքանչիւր կազմակերպութիւն գործում է ինքնուրոյնաբար: Ինքնին սա «բացասական» գործօն չէ, այլ սփիւռքի բնութագրի արտացոլումը: Համակարգումը չի նշանակում եւ չպէտք է նշանակի կենտրոնացում: Իրօք՝ Հայաստանին օգնութիւն ցուցաբերելու ապակենտրոնացած գործընթացներ ունեն ընդհանուր առմամբ դրական արդիւնք:

2. Սփիւռքի աջակցութիւնը Հայաստանին (եւ Ղարաբաղին) կենտրոնացել է մի շարք հիմնական բնագաւառների շուրջ

Սոցիալական ապահովութեան բնագաւառի ծրագրեր. Դրանք ընդգրկում են ծնողագործի երեխաներին, թշակառուներին, փախստականներին, պատերազմից տուժածներին եւ հասարակութեան տնտեսապէս անապահով հատւածին, իսկ յատուկ իրավիճակներում՝ ողջ բնակչութեանը տրամադրուող օգնութիւնը (օր.՝ 1993թ. «Չմեռ» ծրագիրը եւ 1994թ. «Վառելիք» ծրագիրը):

Միջ կառավարութիւն. Կառավարութեան ծրագրերի մեծ մասը կենտրոնացած էր ենթակառուցի բարելաւման ու ստեղծման վրայ, սփիւռքի կազմակերպութիւնները ոչ-հայկական հասարակական կազմակերպութիւնների հետ միասին կարեւոր դեր են ունեցել կարճաժամկէտ- միջին տեսլութեան օգնութիւն ցուցաբերելու հարցում, որն ուղղւած էր հասարակութեան համեմատաբար աւելի փոքր հատւածին, որոնց կեանքի հակառակ դէպքում կարող է աւելի դժուար լինել:

Մտղջապահութեան բնագաւառ. Ընդգրկում է բժշկական պարագաների, սարքատրումների եւ դեղորայքի տրամադրումը, ինչպէս նաեւ՝ Հայաստանում բժշկական ծառայութեան բարելաւումը, անձնակազմի եւ մասնագէտների ուսուցումը, սփիւռքահայ բժիշկների պարբերական այցելութիւնները եւ խորհրդատուութիւնները, նոր բժշկա-կան յարմարութիւնների կառուցումը:

Ի լրումն մեծ թույլ սփիւռքահայ բժիշկների եւ կամաւոր բուժմասնագէտների կողմից իրականացուող անհապաղ վիրահատութիւնների եւ բժշկական խնամքի, ըսփիւռքի կազմակերպութիւնները եւ մասնագէտները մեծ ներդրում են ունեցել Հայաստանի առողջապահական համակարգի բարելաւման եւ արդիականացման գործում: Գոյութիւն ունեցող պետական բժշկական հաստատութիւններում ներդրումներ կատարելուց բացի, սփիւռքահայ բժիշկների եւ կազմակերպութիւնների կողմից ըստեղծւել են նոր եւ ամենաժամանակակից բժշկական հնարատրութիւններ:

Կրթութիւն. Այն իր մէջ ներառում է օգնութիւնը (դրամական միջոցներ, համակարգիչներ, գրականութիւն եւ ուսուցողական նիւթեր) հիմնականում բարձրագոյն կրթական հաստատութիւններին (համալսարաններ եւ տեխնիկական դպրոցներ) եւ հաւելավճարներ գիտնականներին ու ուսուցիչներին: Ամենանշանակալին այս առումով Հայաստանի ամերիկեան համալսարանի ստեղծումն էր: Ընդհանուր առմամբ վերջին տասնամեակի ընթացքում միջնակարգ դպրոցներին ցուցաբերած օգնութիւնը նա-

զագոյնն էր, սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում այս բնագաւառի հանդէպ եւս նկատուում է աճող հետաքրքրութիւն եւ Հայաստանի հասարակական դրպրոցներին յատկացուող օգնութեան ընդլայնում, այդ թում նաեւ՝ շէնքերի վերանորոգում, ենթակառուցի բարելաւում ու աւելի բարենպաստ կրթական մթնոլորտի ստեղծում:

Մշակութային ծրագրեր. Ընդգրկում են օգնութիւնը գրողներին, երաժիշտներին, նկարիչներին եւ դերասաններին, ինչպէս նաեւ նրանց արւեստի ներկայացումը ըսփիւռքահայ եւ միջազգային հանրութեանը:

Կրօնական. Ներառում է եկեղեցիների վերանորոգումը եւ կառուցումը, կրօնական գրականութեան տրամադրում, կրթութիւնը եւ ուսուցումը, ամառային ճամբարների կազմակերպումը երիտասարդների համար եւ աւետարանական հովապետութիւնների հաստատումը:

Տեխնիկական աջակցութիւն. Հայաստան են այցելել բազմաթիւ մասնագէտներ՝ իրենց փորձը փոխանակելու, խորհրդատուութիւններ անցկացնելու եւ տարբեր բնագաւառներում, մասնատրապէս գիտատնտեսութեան, էներգետիկայի, շրջակայ միջավայրի եւ տեխնոլոգիայի, մեթոդաբանութեան վերաբերեալ աջակցութիւն ցուցաբերելու նպատակով: Երկրաշարժից յետոյ մասնագէտների տասնեակ խմբեր Հայաստանում անց են կացրել հետազոտութիւններ եւ ուսումնասիրութիւններ ի շահ կառավարութեան եւ հաստատութիւնների: Ըստ էութեան հնարատր չէ դուրսով գնահատել այս ծառայութիւնների ծաւալը:

3. Կեռանկար

Ոչ-հայկական մարդասիրական օգնութիւն

Սկսած 1992թ. Հայաստանը լայնածաւալ մարդասիրական օգնութիւն է ստացել միջազգային դոնոր-երկրներից եւ կազմակերպութիւններից: Այդ ժամանակաշրջանի օգնութիւնը պայմանաւորուած է անկախութիւնից յետոյ առաջ սոցիալական իրավիճակով, տնտեսական անցումնային շրջանով եւ տրանսպորտային էներգետիկ շրջափակմամբ: Սակայն, առաջին տարիների ողջ օգնութիւնը չէ, որ գրանցել է Վիճակագրութեան նախարարութեան կողմից եւ նոյնիսկ գրանցման դէպքում էլ, դրա ծաւալը հաշւարկւած չէր: Օրինակ՝ միայն 1992թ. ԱՄՆ մարդասիրական օգնութեան փաթեթը կազմել է \$84 միլիոն:

Ըստ 1994թ. Վիճակագրութեան վարչութեան հաշւարկների, Հայաստան առաքուող մարդասիրական օգնութեան բեռների ներմուծումները կազմել են \$71.3 միլիոն (չհաշւելով 270 000 տոննա ցորենը):

1995թ.՝ Մարդասիրական օգնութիւնը հասել է իր գագաթնակէտին՝ \$151.3 միլիոնի: Միացեալ Նահանգներն ու Եւրոպական Միութիւնը եղել են երկու ամենախոշոր նւիրատուները:

Միայն 1996թ. վերջից էր, որ Վիճակագրութեան նախարարութիւնը սկսեց պարբերաբար գրանցել բնակչութեան առաւել խոցելի մասի համար նախատեսած ուղղակի օգնութեան համար տրամադրուող մարդասիրական օգնութեան ծաւալը եւ արժէքը: ■

Ճար. 1

Թեիրանի հայկական եկեղեցիների գործունեությունը

Էդ. Բաղդասարեան
(Թեկնածուական դիսերտացիայից, գրված 1995թ.)

Թեիրանի հայկական եկեղեցիների եւ առաքելական եկեղեցու գործունեությունը, ընդհանրապես, ունեցել է մեծ մասամբ հասարակական եւ մանաւանդ մշակութային իւրայատկութիւններ: Այսպէս.

Թեիրանահայ առաքելական-լուսաւորչական եկեղեցի

Հիմնադրել է 1768 թականին: Հայերի բացարձակ մեծամասնութիւնը առաքելական եկեղեցուն է պատկանում:

Հայկական լուսաւորչական եկեղեցին Թեիրանի թեմի ստեղծումից առաջ (1940-ական թթ.), ենթակայ էր Նոր Ջուղային: Մինչեւ 20-րդ դարի սկիզբները Թեիրանում գոյութիւն ունէր երեք եկեղեցի (Ս. Թադէոս-Բարդուղիմէոս, Ս. Գեորգ, Ս. Մինաս): 1926թ. Իրանա-Հնդկաստանի թեմակալ Մագիստրոս Մեսրոպը Արք. Տէր Մովսիսեանի եւ Հ. Մասեհեանի ջանքերով, ընտրուեցին ներկայացուցչական մարմին, համայնական վարչութիւնն ու հոգաբարձութիւնը¹: Մինչեւ 1944թ. իրանահայ գաղութը պահպանում էր իր պատմական բաժանումը երկու թեմերի՝ Թարիզի (Ատրպատական) եւ Իրանա-Հնդկաստանի (Նոր Ջուղա): Թեիրանում եւս հայկական աւանդական սովորութիւնների ու հայ եկեղեցու կանոնների համաձայն, թեմական մարմինները լուծուեցին եւ ընտանեկան եւ ժառանգական հարցերը: 40-ական թականների սկզբին փորձ արեց Թեիրանում ստեղծել թեմական խորհուրդ, սակայն Էջմիածինը չճանաչեց այն²: Թեիրանի թեմի ստեղծման նախաձեռնողը Էջմիածինն էր: 1944թ. ապրիլին այդ նպատակով Իրան ուղարկեց կաթողիկոսի անձնական ներկայացուցիչ՝ պրոֆ. Աշոտ Աբրահամեանը: Թեմի պաշտօնական հռչակումից յետոյ որպէս թեմակալ առաջնորդ Թեիրան ուղարկեց Վահան ծայրագոյն վարդապետ Կոստանեանը: Թեիրանում նա երկար չմնաց (1945թ. յունւարից մինչեւ յունիս) փոխադրեց Նոր Ջուղա, որպէս Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ: Թեիրանի թեմի առաջնորդի պաշտօնում նրան փոխարինեց Ռոբէն Դրամբեանը (1945թ. դեկտեմբեր): Թեմական մարմինները Թեիրանում ստեղծուեցին եւ 1947-1948թթ:

1949թ. հոկտեմբերին թեմի պատգամաւորական ժողովը ընտրեց թեմական խորհրդի նոր կազմ: Ժողովի ընտրութեամբ յանձնարարեցին մշակեց թեմական կանոնադրութիւն, որը 1951թ. ապրիլին արժանացաւ պատգամաւորական ժողովի հաւանութեանը եւ հաստատուեց կաթողիկոսի կողմից³: Այն վերամշակուեց 1970 թ. յունւարի 24-ին եւ 1972 թ. հոկտ. 26-ին վաւերացուեց Ազգային



Ս. Սարգիս եկեղեցին Թեիրանում

Ժողովի նիստին եւ 1973 թ. հոկտեմբերին Կիլիկիայի կաթողիկոս Խորէն Ա-ի պաշտօնագրով մնալու գործադրութեան ուժ ստացաւ⁴:

Կանոնադրութեան համաձայն Պատգամաւորական ժողովը հրաւիրում է տարին մէկ եւ դա էլ իր հերթին ընտրում է Թեմական Խորհուրդ:

Թեմական Խորհրդի հսկողութեան տակ է ժողովրդի իշխանութիւնը եւ ազգային մարմինները:

Թեիրանի թեմը ստեղծեց Էջմիածնի նախաձեռնութեամբ 1944թ. ապրիլին: Այդ թեմի պաշտօնական հռչակումից յետոյ որպէս առաջնորդ Թեիրան ուղարկեց Վահան Ժ. վրդ. Կոստանեանը: Թեիրանում նա երկար չմնաց (1945թ. յունւարից մինչեւ յունիս) եւ փոխադրեց Նոր Ջուղա, որպէս Իրան-Հնդկաստանի թեմի առաջնորդ: Նրան փոխարինեց Ռոբէն Դրամբեանը 1945թ. յունիսից մինչեւ 1948թ. դեկտեմբեր): 1960թ. յունւարի 1-ին որպէս առաջնորդ Թեիրան ժամանեց Արտակ արքեպ. Մանուկեանը⁴:

Նա ծնել էր 1931թ. Բէյրութում: Նախնական կրթութիւնը ստացել էր Լիբանանի «Միսիթարեան» վարժարանում, ապա 1945թ. ընդունել էր Ամթիլիասի դպրեվանք: 1953թ. ստացել էր վարդապետական գաւազան: Բարձրագոյն ուսումը ստացել էր Լիոնի աստուածաբանական համալսարանում: 1958թ. ձեռնադրուել էր եպիսկոպոս: Ամթիլիասում պատասխանատու պաշտօններ էր վարել, եղել է «Հասկ» ամսագրի խմբագիր, դասախօս դպրեվանքի եւ այլն:

1960-ին ընտրուել էր Թեիրանի Հայոց Թեմի առաջնորդ: 1961-ին ստացել էր արքեպիսկոպոսի տիտղոս: Ունի բազմաթիւ աշխատութիւններ՝ կրօնական, բանաստեղծական, դաստիարակչական աշխատութիւններ՝ կրօնական, բանաստեղծական, դաստիարակչական եւ ազգային բովանդակութեամբ, որոնցից կարելի է յիշատակել հետեւեալները.

«Խօսք ժողովրդին» (1961), «Աւետարանի շունչով» (1962), «Հատարքի հարցը արդի ընկերութեան մէջ» (1963), «Ապրիլ 24» (1965), «Աստուծաշունչ մատեանը»

¹ Պարսկահայ տարեցոյց, 1927, էջ 113:

² Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ.8, էջ 231 (ՀՄՄՀթ. ԿՊՊԱ, Գ. 57, Գեորգ 6-րդ կաթողիկոսի 1941թ. ապրիլի 14-ի կոնդակի պատճենը)

³ Նոյն տեղում, էջ 231:

⁴ Կանոնադրութիւն Հայկ. եկեղեցու, Թեիրանի Թեմի, Թեիրան, 1974, էջ 2:

⁵ Կանթեղ օրացոյց, Թեիրան, 1985թ.:

Հասարակական

(1969), «Հայ եկեղեցու տօները» (1969, 1981 պարսկ. 1973), «Լոյս եւ սուրբ» (1971), «Արեւ գիշերուան մէջ» (բանաստեղծութիւն 1973), «Ձուրը կրօնական ծիսակատարութեան մէջ» (1973), «Վերանորոգումի հարցը հանրային եւ մշակութային կեանքի մէջ» (1976), «Լուսատու ճամբաներ» (1976), «Կենցաղագիտական խորհուրդներ» (1977), «Ճառագայթը լեռան վրայ» (1981), «Կրօն եւ մշակոյթ» (1982), «Ժամանակի աքցանի մէջ» (1985) եւ բազմաթիւ յօդածներ⁶:

Կաթողիկէ եկեղեցի

Դեռեւս 1604թ. Օսի Աբրահիմ բռնագողթի ժամանակներից Իրան փոխադրած հայերի մէջ կային կաթողիկէ հայեր:

Թեհրանի հայ կաթողիկէների համայնքը կազմակերպւել է 1934թ.: Այն եկեղեցական վարչութիւն չունի եւ իշխանութիւնը կենտրոնացած է ժողովրդապետի ձեռքին: Թեհրանում է գտնուում նրանց պատրիարքական փոխանորդութիւնն ու առաջնորդարանը:

Թեհրանահայ կաթողիկէ համայնքը ունի Ս. Գրիգոր Լուսատուի անամբ եկեղեցի, որը հիմնուել է 1950-54թթ.⁷: Հայ կաթողիկէ եկեղեցին Վատիկանի Պապին է ենթակայ, բայց եւ մօտ կապեր ունի լուսատուական հայերի հետ:

1941թ. հիմնուել է Նոր Ջուղայի «Հայ կաթողիկէ կանանց արքատախանայի ընկերութիւնը», որից յետոյ ստեղծւեց նաեւ Թեհրանի համանուն ընկերութիւնը⁸:

1960-ական թականների սկիզբներին «Վասն կրօնի ու հայրենեաց» մշակութային կազմակերպութիւնը «Աւարայր» հայ կաթողիկէ երկսեռ երիտասարդական միութիւնը:

1939թ. Թեհրանում գործում է «Մարիամ կոյսերի կրթական հաստատութիւնը»⁹:

Ինչպէս նախկինում, ներկայումս էլ հայ կաթողիկէ եւ տարբեր կրօնական միաբանութիւններին պատկանող քարոզչիւններն ու նրանց ուսումնական հաստատութիւնները ջանք չեն խնայում իրենց դաւանանքը տարածել իրանահայ համայնքում:

1971թ. բացւեց կաթողիկէական համայնքի «Հայկաշէն» մանկապատանական ճամբարը¹⁰: 1973թ. հայ կաթողիկէ կոյսերը եւ նրանց օժանդակող «Տիկնանց միութիւնը» Թեհրանում հիմնեց «Մանուց տուն» կոչուող որբանոց¹¹:

Հայ կաթողիկէ համայնքի նշանաւոր հոգեւորական, կրթական ու մշակութային գործիչներից եղել է Հայր Մանուէլ Ժ. վրդ. Բոլաղեանը: Նա ծնուել է 1912թ. Մարաշում, 1937թ. ձեռնադրուել է կուսակրօն եւ 1938թ. գործուղւել է Իրան, ուր պաշտօնավարել է Նոր Ջուղայում եւ Թեհրանում: 1945թ. աջակցել է, «Անարատ յղութեան հայ կոյսերի դպրոցի» բացմանը եւ 1950թ. Ս. Գրիգոր Լուսատուի եկեղեցու շինարարական աշխատանքների:

Հիմնուել է Հայ Կաթողիկէ Աւարայր օրիորդաց միութիւնը: 1962-ին նրա ջանքերի շնորհիւ հիմնադրուել է Հայոց «Ալիշան» դպրոցը եւ տնօրինել այն: Նա մի շրջան եւս ստանձնել է Հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետութեան պարտականութիւնը: Ունի բազմաթիւ աշխատութիւններ պատմա-բանասիրական բնագաւառում: Վախճանուել է 1993թ. յունիսի 20-ին¹²:

Բողոքական եկեղեցի

Իրանում կրթական-միսիոներական նշանակալից աշխատանք են կատարում իրանաբնակ բողոքականները: Բողոքական-աւետարանական շարժումը մուտք է գործել Իրան 1834թ. Ամերիկեան միսիոնարութեան միջոցով ներառւելով մուտք են գործել Ատրպատականի սահմանամերձ քաղաքներից Ուրմիայում¹³:

Թեհրանի Աւետ. եկեղեցին հիմնուել է 1879թ. ամերիկեան միսիոնար Վեր. Ջեյմս Բասթրի, Միքայէլ ԳեյնՖեանի եւ ուրիշների նախաձեռնութեամբ:

1883-ին, նրանք դիմելով Նասերեղոյի Շահին, ստանում են արտօնութիւն եւ 4000 ռիալ պարգէւ: Հիմնադրուում է մի եկեղեցի քաղաքի հարաւային մասում (Գարազէ Ղազիւն, խիաբանէ Արամանէ) 1891թ. նոյեմբերի 18-ին¹⁴:

Թեհրանի հայ բնակչութեան արտակարգ աճի շնորհիւ, հայութեան մի մասը հաստատուում է քաղաքի հիւսիսային մասում: Այդ մասում հայ աւետարանականները 1946թ. հիմնում են Ս. Յովհաննէս եկեղեցին¹⁵:

Հայ բողոքականները 1960-ական թթ. սկիզբներին ունեցան իրենց համայնքի ընտրովի խորհուրդը: Վարչական մարմինները կոչւած են հանրային, կրթական, կրօնական եւ այլ կարիքների դեպքում օգնելու համար հայ բողոքականներին¹⁶:

Բողոքականների կենտրոնական եկեղեցին է եղել Ղաւան-օլ-Մալթանէ (ներկայիս Սիրգա Քուշեկ խան) փողոցում գտնուող «Աւետարանական եկեղեցին», որը աւելի քան յիսուն տարի եղել է մայրաքաղաքում բնակուող անգլիական պաշտօնեաների եւ շոտլանդական մատնական ժողովարանների կենտրոն¹⁷:

Հայ աւետարանական համայնքը ունեցել է նշանաւոր դէմքեր, որոնցից հարկ է յիշատակել վերապատելի Թաղեոս Միքայէլեանին: Նա ծնուել է 1932թ. Թեհրանում: Աւարտել է Թեհրանի համալսարանի իրաւաբանական ճիւղը, 1953թ. եւ Բէյրութի Նեսք համալսարանի աստուածաբանական ճիւղը, 1974թ.: Նա լայն տեղեկութիւններ ունի փիլիսոփայութեան, հոգեբանութեան եւ պարսկերէն գրականութեան ասպարէզներում:

Եղել է Թեհրանի հայ աւետ. Մեսրոպեան «Գոհար» դպրոցում որպէս ուսուցիչ, փոխտեսուչ եւ տեսուչ: Չեռնադրուել է հոգեւոր ծառայութեան համար 1976թ.: 1980թ. ըստանձնել է եկեղեցու եւ համայնքի հովութեան պաշտօնը:

Ճար. հաջորդ էջում

⁶ Արտակ արք. Մանուկեան, Կենսագրական նոթեր եւ մտայնութիւն ստեղծագործութիւնների, Թեհրան, 1985, էջ 13:

⁷ Լ.Գ. Միանսեան, Իրանի հայկական եկեղեցիները, Նոր Ջուղա, 1983, էջ 34:

⁸ «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 507:

⁹ Յ. Փաւլեանեան, Իրանահայ համայնքը, Երեւան, 1989, էջ 177:

¹⁰ «Հոր», 1971, թիւ 2, էջ 99:

¹¹ Նոյն տեղում:

¹² ԲաճՖի օրացոյց, 1988 եւ 1994:

¹³ Ն. Ս. Մուրադեան, Պատմիչի վրայ, Թեհրան, 1971, էջ 21:

¹⁴ Նոյն տեղում, էջ 126:

¹⁵ Լ.Գ. Միանսեան, Իրանի հայկական եկեղեցիները, Նոր Ջուղա, 1983, էջ 34:

¹⁶ «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 513:

¹⁷

Վարդավառի տոնակատարութիւնը Հայաստանում

Ա. Ա.

Եկեղեցական պաշտօնական տօնացոյցում Այլակերպութիւն կամ Պայծառակերպութիւն կոչող տօնը, որը ժողովրդի մէջ յայտնի է Վարդավառ (Վրթիվեր, Վարթետր) անունով, շարժական տօն է, նշում է Ձատիկից 98 օր յետոյ, յունիսի 28-ից օգոստոսի 1-ը: Այս տարի նշում է յուլիսի 22-ին: Մակայն Հայաստանի հիւսիս-արեւելեան շրջաններում ժողովուրդը Վարդավառը նշում է յուլիսի 22-ին յաջորդող կիրակին:

Ըստ տօնի քրիստոնէական բացատրութեան, այդ օրը Քրիստոսի պայծառացած կերպարանքը Թարքո լեռան վրայ երևում է Մովսէս եւ Եղիա մարգարէներին, Պետրոս, Յակոբ եւ Յովիաննէս առաքեալներին: Քրիստոնէական արւեստում Պայծառակերպութեան հնագոյն պատկերները յայտնի են 6-րդ դարից: Հայկական արւեստում Արթամարի Սր. Խաչ եկեղեցու որմնակարն է (921թ.), իսկ մանրանկարչութեան մէջ Պայծառակերպութեան տեսարանի մեզ հասած առաջին պատկերները 11-րդ դ. նկարագարդ արտարաններում են:

Հայոց մէջ Վարդավառը հնագոյն արմատներ ունեցող տօներից է: Համբարձումից յետոյ, քանի դեռ «արբերը համբարձած էին», ուխտագնացութիւններ չէին լինում եւ սկսում էին Վարդավառով:

Ամենասիրած ուխտատեղը Մշոյ Սբ. Կարապետի վանքն էր: Շատերը եօթ տարի եօթական շաբաթ՝ Համբարձումից մինչեւ Վարդավառ «Մ. Կարապետի» կամ «Օխուն անւան» պաս էին պահում: Եօթ տարին լրանալուց յետոյ, Վարդավառին գնում էին Մշոյ Սբ. Կարապետ՝ Յովիաննէս Մկրտչի գերեզմանին ուխտի, որպէսզի իրականանայ իրենց իղձը:

Այժմ էլ, Հայաստանում շատ շրջաններում Վարդավառից մի քանի օր առաջ տօնական եռուզեռ է սկսում: Հաւաքում են քաղաքներում սպորող համագիտակցիները, ուխտատեղիներ կամ սար գնալու պատրաստութիւն տեսնում: Տօնի ծեսերը հիմնականում ընդհանրական են բոլոր շրջանների համար. միմեանց վրայ ջուր են լցնում, աղամիներ քցնում, ծաղիկներ նւիրում, եկեղեցի հասկեր տանում՝ օրհնելու նպատակով, ինչպէս նաեւ ուխտագնացութիւններ, մատաղներ, գիշերային հանդէսներ եւ այլն:

Շատախում երիտասարդները Վարդավառի նախորդ օրը՝ շաբաթ երեկոյեան դէգեր էին շինում, որոնցից մէկը պէտք է միսներից մեծ լինէր: Մութն ընկնելուն պէս հերթով, մինչեւ լուսաբաց սկսում էին վառել մանր դէգերը:

Նախիջեանում վաղ առաւօտեան կանայք թելերի վրայ ծաղիկներ, խնձոր, մանր վարունգ եւ վարդեր էին ամրացնում, իսպաճեւ կապում երեխաների կրծքին եւ տանում եկեղեցի:

Տաւուշում տօնի նախորդ օրն աղջիկներն ամբողջ ցերեկը շրջում էին դաշտերում, բազմերանգ եւ յատկապէս «վրթիվերի» դեղնագոյն ծաղիկը հաւաքում, իսպաճեւ փրճելը անում եւ գիշերը գաղտնի նետում հարազատների բակը:

Յատուկ պատրաստութիւն էին տեսնում նաեւ նշանած աղջիկները: Մի քանի «խաչ փնջերից» նրանք ծաղկէ «կրկարանք» էին պատրաստում, զարդարում անուշեղէնով եւ ուղարկում նշանածի ընտանիքին:

Մարերում Վարդավառի ամենատարախ հանդէսներին հաւաքում էին երաժիշտներ, լարախաղացներ, կազմակերպում էին տօնավաճառներ, զբօսախնջոյքներ, ճոճա-

խաղեր, գօտենարտեր, ձիարշաւներ: Մարտրներն էլ ծաղիկներով զարդարում էին անասունների ճակատը, վիզը եւ պտտեցնում մարդկանց մէջ: Բացօթեայ զարճակայրերը «աղջկատեսի», հարս ընտրելու հնարատրութիւն էին տալիս:

Վարդավառի առանձնայատուկ խաղը ջրախաղն էր, որը մինչ օրս պահպանել է: Միմեանց վրայ ջուր լցնելն ուղղակի անհրաժեշտութիւն էր: Ջուր էին լցնում ծանօթի եւ անծանօթի վրայ՝ առանց հաշի առնելու դիմացինի տարիքն ու հասարակական դիրքը: «Ջուր էր շարտում չխօսկան հարսը սկեսրայրի վրայ, իր կեանքում քառորի ներկայութիւնից փախչող սանամէրը, եթէ յաջողացնէր քառորի վրայ իր թաքստոցից ջուր շարտել»:

Իրաքանչիւր ընտանիք պարտադիր այդ օրը մատաղ էր անում: Այսօր էլ շատ շրջաններում Վարդավառին մատաղ են անում:

Մարաշում տարածած էր համոզմունքը, որ Վարդավառի շաբաթ լոյս կիրակի գիշերը ջրերը շատանում են: Դրան անկանատես լինելու համար գնում էին աղբիւրները:

Արցախում հաստատւում էին, որ Վարդավառին բոլոր սրբերի վրայ լոյս է իջնում, եւ ով որ տեսնի այդ լոյսը, ինչ խընդրի՝ կը կատարւի: Պատմում են նաեւ, թէ Հոգեգալստին բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ Վարդավառին կըրկին իջնում իրենց տեղը՝ ընդունելով լուսատր աստղերի կերպարանք: ■

Շար. նախորդ էջից

Թարգմանել է շուրջ 60 անուն հոգեւոր եւ քարոյական ու գրական ստեղծագործութիւններ¹⁸:

Նա եղերական մահով վախճանեց 1994 թ. յունիսին Թեհրանում¹⁹:

Որոշակի թով հայ գալստականներ (շաբաթականներ), իրենց ժողովատեղիներով եւ քարոզչիներով գտնւում են Թեհրանում, նրանց եկեղեցին գտնւում է Նաղերի (ներկայիս Ջոմհուրի Էսլամի) փողոցում, անգլիական դեսպանատան մօտակայքում:

Գալստականները Իրանում ունեն իրենց կազմակերպութիւնը, որը Ֆինանսատրում է ամերիկեան միջոցներով²⁰:

Իրանում համեմատաբար փոքր թիւ են կազմում հայ ուղղափառներն ու ունիթորները: Առաջիններին պատկանող շատ քիչ հայեր բնակւում են Ատրպատականում²¹, իսկ ունիթորներին հարող հայերի թիւը շատ քիչ է:

Կարմեղեանները կաթոլիկական կրօնին են պատկանում եւ 1625թ. Լիբանանի Կարմեղ լեռան մօտից են եկել Իրան եւ հայերի մէջ քարոզչութիւններ կատարել: Այժմ նրանց թիւը շատ քիչ է եւ չունեն առանձին եկեղեցի²²:

Իսլամական յեղափոխութիւնից յետոյ եւս մի փոքր կրօնական աղանդ Ամերիկայի հովանաւորութեամբ ըստեղծել է իր «Աստու ժողովուրդը» եկեղեցին մայրաքաղաքի հայախոծ թաղամասերում: Մի այլ աղանդ եւս իսլամական յեղափոխութիւնից յետոյ զբաղւում է քարոզչական աշխատանքով «Եհովայի վկաներ» անունով²³: ■

¹⁸ Ալիք, Թեհրան, 1994, յուլիսի 17:

¹⁹ Ալիք, Թեհրան, 1994, յուլիսի 4:

²⁰

²¹ Նոյն տեղում, էջ 72:

²² Նոյն տեղում:

²³ Աքր. Հովասափեան, Ուլքե՞ր են Եհովայի վկաները, Թեհրան, 1993, էջ 3:

Մշակոյթ

Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

(Շար. նախորդ համարից)

Կրօնըզաբէտի- Դարասկզբին արդէն քրքարնակ: Գիւղում հայկական մի բերդ, որ կառուցւած է եղել ձորաբերանում հսկայ մի ժայռի վրայ: Գիւղի մօտ եւ բերդի ըստորտող խաչակիր գերեզմանաքարեր. նրանց մէջ ընկած է մի մեծ ժայռի կտոր վրան փորած հասարակ մի խաչ, որին ուխտի են գնացել եւ մոռ վառել նոյն գիւղի եւ շրջակայ գիւղերի թուրք բնակիչները: Ժայռից քիչ հեռու գոյութիւն է ունեցել հողի մէջ խրամ ջրաղացի մի կլոր քար:

Կարաքիլիստ- Գրիբուլաղից 2 ժամ եւ վանքից 20 րոպէ հեռաւորութեան վրայ: 19-րդ դարի վերջին տպագրութեան հաղորդման համաձայն գիւղն քաղկացած է եղել 30 տնից, որոնք գաղթականներ են եղել՝ Մուշի, Վանի շրջաններից եւ Ալաշկերտի՝ Հայոժոր, Խառակոնիս, Հախորկ եւ Կործոտ գիւղերից, որոշներն էլ Մակուից եւ Գարայնից: Գիւղը Ս. Թադէի վանքի սեփականութիւնն էր: (Արարատ, 1898, Յուն. էջ 38)

Չորս- 18-րդ դարի սկզբին կազմւած «Անցք Վասպուրական աշխարհի» խորագիրը կրող ժամանակագրութեան մէջ յիշատակւում է Չորս բերդը:

Բարաջուր- Ս. Թադէի վանքի մօտ, ուր կան հայկական չորս կիսաւեր մատուռներ եւ գերեզմանոց:

Աւաջուղ- Մակու քաղաքից հիւսիս-արեւմուտք, Խոյ-Կարինի ճանապարհի վրայ: Համաձայն Ն. Գորոյեանցի Աւաջուղի հայերը դարասկզբին գաղթել են Վրաստան, նրանց տեղը գրաւել են Ելրանլու կոչւած թուրք ցեղը: Ն. Գորոյեանցը վկայում է, որ Աւաջուղում գոյութիւն են ունեցել երկու կիսաւեր եկեղեցիներ:

Ղարէին- Խոյ-Մակու ճանապարհի վրայ: Ղարէինի կապակցութեամբ Ն. Գորոյեանցը գրում է. «1862-ին, երբ Մալթա ուսանելու կերթայի, գիշեր մը աստ անցուցի: Թուրքերն կը պատմէին, որ ժամանակին այդ գիւղին մէջ 200 տուն հայ բնակիչ բնակէր է, բայց մերձ մէկ դար ամառ հետզհետէ ցրելով, գիւղը մնաց թուրքերին: Քիչ մը հեռու գերեզմանատուն մը ցայց տւին, որ հայոց եղած էր»:

Արտագ գաւառի հին հայկական տեղանունները

Գաւառի հին անանունները չեն ենթարկւել արաբական կամ քրքարական լեզուների աղաաղումներին, աւելի հարազատ են հասել մեզ, եւ այդ պատճառով լեզաբանական մանրակրկիտ վերլուծութեան շնորհիւ, նրանց միջոցով կարելի է պարզել վաղ անցեալում, տեղում ապրող ժողովրդի նախապատմական ժամանակաշրջանի պատմութեան մութ կողմերը: Օրինակ՝ վերջերս սկսել է լուրջ կերպով քննարկել՝ Արարատ, Արմէն, Արագ, Արի բառե-

Սերոժ Թիլիմեան

րի ար. արմատը. համանման արմատների վերլուծութիւնը եւ դրանց հիման վրայ ձեռք բերած եզրահանգումները կարող են օժանդակել Արտագ գաւառի պատմութիւնը շարադրելու մէջ:

Գրաւոր մատեաններից մեզ են հասել մի շարք տեղանուններ եւ կցկտուր տեղեկութիւններ դրանց մասին:

Շաւարշան- Հանդիպում ենք Խորենացու մօտ նաեւ Շաւարշական ձեռք. նա Արտագ գաւառի նախկին անունը կոչում է այդպէս՝ Շաւարշան կամ Շաւարշական:

Համանուն անունով քաղաք է յիշատակւում նաեւ «Վկայաբանութիւն Ս. Թադէի Առաքելոյ եւ Մանդուխտ կուսի» գրքոյկում. «Եւ ինքն Մուրք Առաքելուն առնողը զաշակերտսն եւ փութով հասանէր յաշխարհն Հայոց առ թագաւորն Սանատրուկ, ի գաւառին Արտագ, ի քաղաքագեղն Շաւարշան, յապարանս արքունի, որ էին հովոց գետինք թագաւորացն հայոց» (Մովսէսը Հայկականք. Ը. Հատոր, էջ 13):

«Գիւտ նշխարացի» մէջ նաեւ Շաւարշանը յիշատակւում է որպէս քաղաքգիւղ. «արի գնա ի գաւառն Արտագ ի քաղաքագեղն Շաւարշան, ի դաշտն Սանատրուկ»:

Աւարայր- Գտնւում է Արաքսի աւազանի Զանգիմար (դեղին) գետի վտակ Մակուի օժանդակ՝ Տոմուտի հովտում: Այդտեղ 451թ. մայիսի 26-ին տեղի է ունեցել Վարդանանց ճակատամարտը: Աւարայրի դաշտի տեղադրութիւնը մինչեւ այժմ էլ վէճերի տեղիք է տալիս. պատմաբան Յ. Մանանդեանը այն տեղադրում է այժմեան Մակուի շրջանում, Բասմաջեանը Աւարայրը որոնում է դարձեալ Մակուի շրջանի Քիլիսաքենդի եւ Մարանդ գիւղերի մօտ, իսկ Կ. Կոստանեանը՝ Հեր գաւառի հիւսիս-արեւելեան կողմերում, Մարիթենդ գիւղի մօտի Չորսի դաշտում: Գ. Շիրմազանեանը (19-րդ դար) եւ նոր ժամանակաշրջանի հետազոտողներից ոմանք Աւարայրը տեղադրում են Մակուի շրջանի Կարագիաղին գիւղի մօտ:

Եղինդ- Գիւղ Արտագ գաւառում, ուր Վահան Մամիկոնեանը 484թ. նախնական բանակցութիւններն է վարել պարսից Նիխոր սպարապետի հետ, Նարսակի հաշտութեան կապակցութեամբ: Դազար Փարպեցին իր «Պատմութիւն Հայոցի» Գ. դրակում յիշատակւում է այն. «Եւ եկեալ Մամիկոնեանն Վահան ի գաւառն որ կոչի Արտագ, ի գետն որ անուանեն Եղինդ, դադարէր անդ ինքն եւ ամենայն զունդն որ էին ընդ նմա»:

Եղինդը այժմ կոչւում է Երինդ, Բինդ եւ գտնւում է Մակու քաղաքից մօտ 8 կմ. հիւսիս-արեւելք, Դեղին գետի ափին:

Վացին- Գտնւում է Մակու քաղաքի հիւսիս-արեւելքում. այժմ յայտնի է Հայտուն անունով. Մ. Կաղանկատւացին յիշում է Հացունեաց խաչը եւ Հացունեաց աւանը:

Մշակոյթ



Թովմայ Արծրունին իր պատմութեան մէջ յիշատակում է, որ Պարսկաստանի Խոսրով թագաւորը գահը Վահրամ Չուբինից ետ վերցրնելու համար օգնութիւն է խնդրում Բիզանդիայի Մորիկ Կայսրից. Մորիկի տւած օգնութեան շնորհիւ նա վերադառնալու է գահին եւ համաձայն նախապէս տւած խոստումին նրան է յանձնում իր իշխանութեան ենթակայ մի շարք

հողանասեր: Այդ կապակցութեամբ Թ. Արծրունին իր երկի երկրորդ դպրութեան երրորդ գլխում գրում է. «Եւ հաստատեցաւ Խոսրով յաթո թագաւորութեան, եւ զխոստացեալն կայսեր՝ կա-տարեաց. ետ նմա զԱրեւաստան զամենայն մինչեւ ցՄը-ծուրն, եւ զերկիրն Հայոց մինչեւ ցգետն Հուրաստան, եւ զգաւառն Կոտայից մինչեւ յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց եւ մինչեւ յԱռեսուն աւան եւ զԿոզովիտ գա-ւառ մինչեւ զՀացիւն եւ ցՄակու»:

Փայտակշտան- Գիւղ, որ հաւանաբար գտնուում է Վասպուրականի Արտազ եւ Ճաշոտ գաւառների սահմանագլխին:

Գագիկ եւ Գուրգէն Արծրունիների ժամանակ Ատրըպատականի պարսիկ իշխանը յարձակում է Վասպուրականի Ճաշ կամ Ճաշոտ գաւառի Շամիրան բերդում նստած Ալէկացի տոհմից Թադէոս Շերեփեանի վրայ: Թովմայ Արծրունին պատերազմի վայր է համարում Փայտակշտան գիւղը:

Գերատայ դաշտ- Հաւանաբար գտնուում է Արտազ գաւառում: Անանուն Արծրունին պատմութեան Գ. հատւածում Թադէոս Շերեփեանի եւ Ատրպատականի պարսիկ իշխանի միջեւ տեղի ունեցած պատերազմի վայրը յիշատակում է Գերատայ դաշտը. ուրեմն վերի տեղեկութիւնների համաձայն Փայտակշտան գիւղը գտնուում է Գերատայ դաշտում: Մովսէս Կաղանկատուացին նոյնպէս յիշատակում է Գերատայ դաշտը. «Դարձաւ Հերակլ յաշխարհն Հայոց, ունելով զնշան խաչի առաջի իւր. եւ եկեալ բանակեցաւ ի դաշտին Գերատայ, մերձ ի քաղաքն Սանատրուկ Շարաքայ»:

Արհեստները

Խաների հարկերից ու տուրքերից փրկելու համար հայերը դիմում էին վաճառականութեան եւ զանազան արհեստների, որոնց շնորհիւ կարողանում էին ձեռք բերել տնտեսական ապահով կացութիւն եւ անկախութիւն:

Մակիկ հայերը պարապել են առեւտրից բացի, զինագործութեամբ, դարբնութեամբ, հիւանութեամբ, պայտառութեամբ, դերձակութեամբ եւ այլն:

Վաճառականները՝ որոնք եղել են մեծ մասամբ կարնեցիներ, կազմում էին փոքր տոկոս. նրանք գաւառում արտադրւած գորգերը, կապերտները, մագեղէնները եւ բամբակը արտածում էին Կարին եւ փոխանակում եւրոպական ապրանքների հետ:

Գարբնութիւնը կենտրոնացած է եղել հայերի ձեռքում եւ դարասկզբում Միրաքեան տոհմի սեփականութիւնն էր. Միրաքեան դարբին ընտանիքներն էին Միրաքի Գալուստի, Միրաքի Վարդանի, Միրաքի Մաթոսի եւ Միրաքի Արզունանի ընտանիքները: Այս ընտանիքներից ամէն մէկը ունէր իր յատուկ նշանը, որ փորւած էր պողպատեայ «սումբայ»-ի վրայ: «Սումբայ»-ի փորագրւած ծայրը դնելով պատրաստւած առարկայի՝ բահի, մանգաղի, խոփի եւ այլ արտադրանքների վրայ՝ մտրճով հարւածում էին «սումբայ»-ի գլխին եւ նշանը փորագրւում էր արտադրանքի վրայ: Այս նշանների միջոցով գնորդը կարողանում էր զանազանել լաւ եւ վատ արտադրանքները:

Մակիկ Միրաքեան ընտանիքների նշաններն էին՝



Մրանցից առաջինը Մաթոսեանցն էր, երկրորդը՝ Վարդանեանցը, երրորդը՝ Գալուստեանցն ու չորրորդը՝ Արզունանեանցը:

Աւանդութիւններ եւ նախապաշարումներ

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին իր սկզբնատրման օրից անհրաժեշտութիւն է զգացել պայքարելու այլ եկեղեցիների ոտնձգութիւնների դէմ: Հակամարտութիւնը ընթացել է յաճախ ոչ թէ գաղափարական տարբեր նպատակներ հետապնդող սկզբունքների միջեւ այլ՝ քաղաքական գերիշխանութեան եւ ազգային ինքնիշխանութեան: Այդ նպատակով կաթողիկ եկեղեցին միշտ էլ առաջ է քաշել իր հիմնադիրների՝ Պօղոս եւ Պետրոս Առաքելների աւագութիւնը Գրիգոր Լուսաւորչի նկատմամբ: Հայոց եկեղեցին որպէսզի չէզոքացնի քարոզչական այս պայքարը ձգտել է իր եկեղեցու սկզբնատրումը միացնել Թադէոս եւ Բարդուղիմէոս Առաքելների գործունէութեանը: Խորեհնացու ներքեւում յիշուած օրինակը այս կապակցութեամբ ամենավաղ շրջանի ստեղծած աւանդութիւններից մէկն է, որ նա գրի է առել իր «Պատմութիւն Հայոց»-ի երկրորդ գրքի 74-րդ գլխում:

Երբ Անակը իբրեւ ապաստան՝ Սասանեան իշխանի դէմ, ապաստան է խնդրում հայոց Արշակունի թագաւորից, Խոսրով թագաւորը օգնական զօրք է ուղարկում «փախստական» Անակին օժանդակելու, շարունակութեան մէջ Խորեհնացին գրում է. «Որոց պատահեալ Անակայ, աժեմ զնա հրամանաւ թագաւորին ի գաւառն, որ անուանեալ կոչի Արտազ, ի տեղի դաշտավայրս, ուր յայտնեցան նշխարք սրբոյ եւ մեծի Առաքելոյն Թադէի:

Եւ աստ ասեմ զոռոյց զսքանչելի ծերոյն՝ որ ասէր, թէ ի նախնեաց ունիմ սովորութիւն, որոյի ի հօրէ առնելով գլիշատակ գրուցացս այսոցիկ, որպէս Որոմայիդորայն յաղագս Տարօնոյ եւ Միմն կոչեցեալ լերինն: Արդ ի բնակելն Անակայ ի դաշտին Արտազու, պատահէ սորա տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն, որպէս թէ ի ներքազոյն սրակապանի խորանին. եւ անդ ասեմ գլորութիւն մօր սրբոյ եւ մեծի Լուսաւորչին: Վասն որոյ եւ գնորին Առաքելոյ շնորհն ընկալեալ, որ առ հանգստարանաւ նորին զինելութիւնն էառ, զնորին ելից զհոգեւոր մշակութեանն պակասութիւնն»:

Ինչպէս որ երեւում է զոռոյցը ստեղծել է նախքան Խորեհնացին, թերեւս հայկական եկեղեցու սկզբնատրման օրերին: ■

Նոր ուղղագրության ամենակարեւոր կանոնները

Զայնարկութիւն

Եթէ ձայնարկութեան միակ ձայնաւորը *ը*-ն է, այն գրում է եւ շեշտ կրում.

թը՛խկ, շը՛փխ հը՛ն, խը՛շշ, ճը՛ռռ, բը՛զզ եւ այլն:

Երկվանկ ձայնարկութիւնների առաջին վանկի *ը*-ն չի գրում.

չըրը՛խկ, թըրը՛խկ, չըրը՛փ, եւ այլն:

Երկար արտասանող ձայնարկութիւնների երկարացուող հնչիւնը գրում է երկու եւ ւեւի գրով.

թը՛ սսս, ո՛ւո՛ւ, հը՛ ը՛մ, էեե՛ հե՛հե՛յ, հե՛հ՛հե՛յ եւ այլն:

Տարբեր բառերով ձեւատրուած բաղադրեալ ձայնարկութիւնները գրում են անջատ բաղադրիչներով.

պա՛ հո՛, հա՛յ հարա՛յ, զը՛նզ հա զը՛նզ, տո բա՛ եւ այլն:

Գծիկով գրում են այն ձայնարկութիւնները, որոնք ձեւատրուած են բաղադրիչի կրկնութեամբ կամ համաեղնչիւն ձայնարկութիւններով.

հա՛Ֆ-հա՛Ֆ, հա՛յ- հա՛յ, հա՛յ-հո՛ւյ, ջո՛ւ-ջո՛ւ, վա՛շ-վա՛շ, տա՛շի՛-տա՛շի՛ եւ այլն:

Կետադրութիւն

Բանաւոր խօսքի ձեւատրման գործում կարեւոր դեր են խաղում հնչերանգն ու դադարները, որոնք նպաստում են մտքերի ճիշտ հաղորդմանը եւ խօսողի վերաբերմունքի արտայայտմանը: Բանաւոր խօսքի հնչերանգային առանձնայատկութիւնները, նախադասութիւնների ու նըրանց բաղադրիչների կապն ու փոխյարաբերութիւնը զըրաւոր խօսքում արտայայտում են կետադրութեան նըշանների միջոցով:

Կետադրական նշանները լինում են երեք տեսակ՝ տրոհութեան, առոգանութեան, բացայայտութեան:

Տրոհութեան նշաններ

Տրոհութեան նշաններն են վերջակետը (:), միջակետը (.), ստորակետը (,), բութը ('):

Վերջակետը դրում է նախադասութեան վերջում.

Հուլիս ամիսն էր, Սմբատասարը մխրճված էր մուգ կապույտի մեջ: Վրան էինք զարկել եւ Անդրանիկի հետ նստած՝ զրուցում էինք այդ սարի վրա:

Միջակետը դրում է՝

1. Բարդ համադասական նախադասութեան համադաս, համագօր նախադասութիւնների միջեւ, որոնք ունեն զգալի ինքնուրոյնութիւն եւ արտասանում են զգալի դարարով.

Նրա վիշտը սեր է սիրելի թշվառին և ընկածին. նրա սերը վիշտ է՝ արտասվել սգավորի հետ, տանջվել կեղեքվածի, լլկվածի հետ:

Մի՞թե յուր գալուստը հայտնի չէ նրանց. ի՞նչ էր նշանակում այդ:

2. Մէջբերող ուղղակի խօսք ունեցող կապակցութեան մէջ, նախադաս հեղինակային խօսքից յետոյ.

Բայց աջը դեպի Սարգստունին ուղղելով՝ սեղմեց նրա ձեռքը եւ ասաց.

-Այնքան շատ եմ պարտական քեզ, իշխան, որ կուզեմայի ապրել միայն քեզ վարձահատույց լինելու համար:

Թուղթը վերցրեց եւ կարդաց. «Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու՝ ներքևը: Էլ մի գա: Սոռացիր ինձ»:

3. Այն նախադասութիւնից յետոյ, որին յաջորդում է բացատրութիւն պարունակող նախադասութիւն.

Երբ ոտքի ելավ, արդեն աներկբա վճռել էր. վաղը գնալու է Միջագետք, այնտեղից էլ՝ հունական քաղաքները՝ վաղօրոք հետը վերցնելով առաջադեմ աշակերտների:

Արևածագից առաջ հինավուրց գյուղը արդեն դրնգում էր. Հոլոյի տան ջրջ եզն է մեռնում:

Արտակը հազիվ հիշեց նրանց. այնքան ցրված էր և մտամոլոր:

Ստորակետը դրում է՝

1. Նախադասութեան համադաս, համագօր անդամների միջեւ, երբ դրանք չեն կապակցում շաղկապով.

Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական հենարանը:

Արագը ինչ-որ տարօրինակ, հսկայական կենդանի է՝ միաժամանակ կատաղի և քաղցր, անսիրտ եւ գթօտ, գեղեցիկ եւ սարսափելի, կամակոր եւ հնազանդ...

Հրացայտ աչքերով, քսան-քսանհինգ տարեկան գեղեցկադեմ ուսանողի փոխարեն այժմ նա տեսնում էր կեղտից փայլիլող հնամաշ, խունացած վերարկուով, մազակալած երեսով, հարբեցողին հատուկ կարմիր թթով, այտոսկրերը ցցւած, կուրծքը ներս ընկած, սապատավոր մի մարդու ...

2. Համադաս, համագօր նախադասութիւնների միջեւ.

Արջերը որսի են դուրս գալիս, վարագներն իջնում են ջուր խմելու, որջի առաջ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արծազանքով զրնգում է Մթնածորում:

Լեռները լցվել էին արյունարբու խմբերով, իսկ մի բուռ հայ կտրիճներ կռվում էին նրանց դեմ:

Օրիորդ Սանդուխտը կարմրեց, բայց նույն վայրկյանին նայեց տիկնոջ աչքերին ու նկատեց վաղուց կասկածված նախանձը:

Նա չէր շտապում, սակայն նրա կույր աչքերը նայում էին մութ հայացքով:

Նկատի ունեցէք, որ համադաս նախադասութիւնները կարող են ունենալ ընդհանուր անդամներ, որոնք արտայայտւած կարող են լինել միայն առաջին նախադասութեան մէջ: Նման դէպքերում համադաս նախադասութիւններից մէկը կամ մի քանիսը կարող են արտայայտւած լինել միայն ստորագեալով.

Գիշերն սկսեց խորանալ, իսկ ծայները անեացան, հալվեցին:

Ամեն կողմից կանչում, հրավիրում, քաշում էին:

Երբ համադաս նախադասութիւնները կապակցւում են *եւ*, *ու*, *կամ* շաղկապներով եւ ունենում են ընդհանուր ենթակայ, նրանց միջեւ ստորակետ չի դրում.

Մի անգամ *Մա* մի սայլ ծմերուկ գնեց ու դարսեց պատի տակ:

Մշակոյթ

Ապարանքում բնակվում էին հինգ *եղբայրները* և օրը երեք-չորս անգամ սեղան էին նստում իրենց կանանց հետ:

Նա ինքն էր հաճախ այցելում ծերունուն կամ ուղարկում էր ընկերոջը:

Երբ այս կարգի մախադասութիւններն ունենում են տարբեր ենթականեր, *եւ, ու, կամ* շաղկապներից առաջ ստորակէտ դրում է.

Դալար *խոտարույսերը* ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ *տարածությունը* օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ:

Երբեմն փայլատակում էր *կայծակը*, և լսելի էր լիւնում խուլ *դրոյում*:

Այդ խորհրդածության վայրկյանին նրա *հայացքը* հանդիպեց կառապանին, ու *նա* մի քայլ հետ ընկավ իր մտքերից:

Դուռը բացվեց, ու չար գայլից հալածված երեխաներն ունեւնում ընկավ *Անանք*:

Լեռների լանջերի երկնեւրանգ *ծաղիկներն* են երգում, կամ թերևս անտառի խորհրդավոր շշուճն է տարածվում:

Երբեմն-երբեմն ներսից ինչ-որ աղմուկի *ծայն* էր լսվում, կամ էլ *դուռն* էր ճռնչումով բացվում ու փակվում:

Յիշէք, որ համադասական *իսկ, բայց, սակայն, այնինչ, այլապէս, ապա, բայց եւ այնպէս, բայց եւ, ինչպէս եւ, ինչպէս նաեւ, թէ չէ* եւ այլ շաղկապներից առաջ միշտ դրում է ստորակէտ, *իսկ եւ, ու, կամ*, շաղկապներից առաջ ստորակէտ դրում է միայն այն դէպքում, երբ համադաս մախադասութիւններն ունեն տարբեր ենթականեր:

3. Գլխատր եւ երկրորդական մախադասութիւնների միջեւ.

Նա վարանքով նայում էր մոշի թփերին, որ մուգ կանաչին էին տալիս ճամփեզրին:

Երիտասարդ իշխանը սիրում էր իրեն շրջապատել այն առարկաներով, որոնք իր սրտին շատ մոտ էին:

Տանը Մինա բիբին չէր ասել, թէ մատուռ են գնում:

Հրավիրում էին մենակյացներին, որպեսզի նրանք կատարեին առավոտյան ժամերգությունը:

Գետի ակունքը հասնում էր մոտակայ բարձունքը, որտեղ ձյան հաստ շերտը հալվում էր հորդառատ անձրևներից:

Բարկությունը խեղդում էր նրան, երբ մտաբերում էր վաղեմի ժամանակները:

Յիշէք, որ գլխատրին յաջորդող երկրորդական մախադասութիւնները սովորաբար սկսում են կամ յարաբերական դերանուններով (ով, ինչ, որ, որքան, որչափ, ինչքան, որպիսի, ինչպիսի, որտեղ, ուր, երբ), կամ ստորադասական շաղկապներով (որ, թէ, եթէ, որովհետեւ, թէեւ, որպէսզի, թէկուզ, թէպէտ, քան մինչդեռ, չնայած, թէ որ, թէկուզ եւ, քան թէ, մինչեւ որ, չնայած որ, հենց որ, չէ որ, քանի որ, քանի դեռ եւ այլն): Ե՛ր յարաբերական դերանուններից, ե՛ւ շաղկապներից առաջ միշտ դրում է ստորակէտ:

Երկրորդական մախադասութիւնը կարող է մախտրդել գլխատրին: Նման դէպքերում պէտք է կարողանալ ճիշտ

որոշել, թէ որտեղ է աւարտում երկրորդական մախադասութիւնը, եւ որտեղ սկսում գլխատրը.

Դրսից եթէ ներս մտնելի գինետուն, ուղղակի դիմացդ կերևար գինեվաճառի առևտրատեղին:

Երբ ոյուցազն արքայորդին լսեց յուր հոր նահատակության լուրը, կայծակի արագությամբ իջավ Բագրևանդ:

Ով որ կամենում է գորավոր տեսնել իր ազգը, նա ամենից առաջ ընտանիքը պիտի խնամի:

Թեկուզ եւ ամառը դեռ չէր վերջացել, բայց օդում արդեն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը:

Երկրորդական մախադասութիւնը գլխատրից ստորակէտով անջատում է երկու կողմից.

Գարեգինը զգույշ, *որպեսզի չսայթաքի ու վայր չընկնի*, իջնում էր դեպի գետը:

Սայիսյան լուսաբացին, *երբ վարդերը բացվում էին փարթամ ու փթթուն*, արբեցուցիչ բուրմունքը բռնում էր այգին:

Քաղաքամայր Վաղարշապատից Դվին տանող այն մեծ ճանապարհով, *որ շինել էր խոսրով թագավորը*, գնում էին երկու հայ գուսան:

Երկրորդական մախադասութիւնը երկու կողմից ստորակէտով անջատում է նաեւ այն դէպքում, երբ նրան մախտրդում եւ յաջորդում են երկու համադաս մախադասութիւններ, որոնցից մէկը երկրորդականի նկատմամբ գլխատր է.

Շապուհ արքան համոզվում է, *որ Արշակ թագավորը հայրենի հողի վրա դառնում է հզոր ու անսպարտելի*, և հրաման է արձակում շրթայակապ անել նրան:

Շաղիտան հանեց եղեգը, *որ խրվել էր վերջի մեջ*, հետո թուրք քսեց վերջի վրա:

Մուշեղն անհանգիստ քրքրում էր նոր մորուքը, *որ թավշյա սև շրջանակի նման բոլորում էր նրա առնական դեմքը*, իսկ Սահակը ստեպ-ստեպ բերանին էր մոտեցնում գինու գավաթը:

4. Նախադասութեան հիմնական մասի եւ միջանկէալ բառերի, բառակապակցութիւնների, մախադասութիւնների միջեւ:

Հիմա, բարեբախտաբար, վերադարձել է:

Եվ ես, իհարկեւ, չէի հասկանում:

Այո, ութ-ինը տարում փոխել էր ամեն բան:

Է՛, ինքը մայրամուտ որքա՛ն էր տեսել:

Հայ կյանքի ծանրագույն պայմաններում էլ Թունանյանը, ինչպէս ասացինք, երբևէ չկորցրեց ապագայի իր հույսը:

Եվ, ինքնըստինքյան հասկանալի է, ամեն ոք աշխատում էր իր վշտակցությունը արտահայտել ժառանգներին:

Ու, չզիտես ինչու, հայիոյում է ինքն իրեն:

Նկատի ունեցէք, որ որպէս միջանկէալ բառեր սովորաբար հանդէս են գալիս վերաբերականները (անշուշտ, անտարակոյս, արդարեւ, իհարկեւ, իրօք, ինչ, հարկաւ, թերեւս, դէ, ինչեւէ, համեմայն դէպս, այո, ոչ եւ այլն) եւ ձայնարկութիւնները (օ՛, ա՛խ, է՛հ, օխա՛յ եւ այլն): ■

Մշակոյթ

Ջալալ Ալ Ահմադի մեկնաբանութիւնը արդի գրականութեան մասին

Այս թարգմանութեան նպատակն է մեր գրասէրներին ու գրչատէրերին ծանօթացնելու գրական ստեղծագործ լեզվի գեղարուեստական նուրբ ու դժար ուղիին, որով նրանք պիտի առաջնորդուեն ընդհանրապէս: Նըման մի կարգախօս է հնչեցնում պարսիկ մտաւորական ու գրող՝ Ջալալ Ալ Ահմադը, որ սրանից 40 տարի առաջ իր արտասանած ճառում սեղմ ու համապարփակ կերպով մեզ է յիշեցնում գրականութեան հիմունքները, նպատակաւացութիւնը, եւ այն, որ հիմնական է՝ մարդու եւ մարդկային հոգսերը:

Չնայած, որ Ջալալ Ալ Ահմադի խօսքը ուղղւած է պարսից գրականութեանը, բայց իր ընդհանրութեամբ եւ ամբողջութեամբ առնչուում է նաեւ մեր պարսկահայ գրական խնդիրներին, ուստի ունի այժմէականութիւն պարունակող արժէք:

Անշուշտ, համամարդկային խնդիրներով շարձախառն «մարդերգութիւն»-ը յաւերժական է, քանի որ մարդու հոգսերն ու տառապանքներն են յաւերժական: Բայց այստեղ կայ մի կարեւոր հարցադրում: Արդեօք երջանկութիւնն անհասանելի՞ է, թէ՞ միայն բթամիտերին է վերապահուած այդ: Կամ միգուցէ՞ եւ երջանկութեան մարմնացն է, որ ստեղծագործում է: Եկեք կռահենք:

*Նիկիտ Միրզայեան
Ապրիլ, 2001 թ.
Նոր Զուղա*

Ջալալ Ալ Ահմադի արտասանած ճառը «Աբադանի տեխնիկական բուհ»-ում 1916 թականին:

Գրական քննադատութիւնը դեռեւս չի սաղմնատրել, եւ հեղինակատր կարծիքի տէրերն էլ ժամանակակից գրականութեանը յաճախ լռութեամբ են արձագանքում,- եւ գրչի տէրերն էլ հարիւր տարուց առաջ այս կողմ չեն անցնում, քանի որ խիստ զբաղւած են հին գերեզմանների պեղումներով, եւ ժամանակակից կենսունակ գրականութեան մասին վիճելը իրենց ձիւ ու կերի համար որակում են վտանգատր,- եւ հետին պարտաւորածութեամբ ընդունեցի ճշալ այս ամբիոնից: Շատ էլ վատ չի ստացում: Դաշակելիքի զգայութիւնը փոխում է:

Երբ մեր համալսարանները ժամանակակից գրականութեան ամբիոն ունենալուց հրաժարում են, եւ երբ տոհմի մեծերը հետեւելով հին աւանդոյթին տակ զբաղւած են մեռելներին վերակենդանացնելով, ճարահատուած մաստիս նման ոչ համալսարանականները այս շրջանակում արդի գրականութեան վերաբերեալ պիտի հասակնեն դատողութիւն անելու...

Յանկութիւն ունեն, որպէս այսօրայ խօսակցութեան հիմք՝ շատ պարզ լեզուով մեկնաբանել «կեանքի խնդիրներին դէմ առ դէմ» միջոց: Այսինքն մարդը կեանքին դէմ հանդիման: Մարդ ասածս, որ բացի կեր ու խումից, քնից ու կրքի ցասումից ունի նաեւ մի այլ հոգս... Ինչպէս գիտենք փիլիսոփայութեան գծով հասել եւ կամ հասնում են կեանքի գոյատեւման հիմնական իմաստներին ու գոյութեան նախնական պատճառաբանութիւններին: Այսպի-

սով փիլիսոփայութիւնն էլ մի մօտեցում է կեանքի խնդիրներին կապւած, զուգահեռ խնդիրների զարգացման:

Այս մեկնաբանութեան համաձայն գրականութիւնն էլ նույնպէս մի մօտեցում է կեանքի խնդիրներին կապւած, բայց անելի մանրակրկիտ կերպով, ինդուկտիւ (inductive) ձեւով: Եթէ փիլիսոփայութիւնը համեմատելով ու ընդհանրութիւններով է ճգնում ի յայտ բերել կեանքի խնդիրները, ապա գրականութիւնը միայնակ, անհատն ու անցմադ դէպքերում պըր-պըտելով է, որ հասնում է այդ նոյն ընդհանրութիւններին: Հետեւաբար գրականութիւնը փիլիսոփայութեան մի ուրիշ տարբերակն է, կամ ամուսնազը դէպի այն տանող ուղին:


Այնուամենայնիւ գրողի կամ բանաստեղծի մօտեցումը կեանքի խնդիրներին, նրա անձնական փիլիսոփայութիւնն է:

Պարսիկ արդի գրականութեան առաջին առանձնալատկութիւնը, որ նկատելի է ընդհանրապէս (բանաստեղծութիւն եւ արձակ), դա մի բազմակողմանի դիրքորոշում է: Դիրքորոշում՝ հնի ու նորի, անելի ու ցանելի, տարբեր սերունդների ու դասակարգերի, լաւատեսութեան ու հոռետեսութեան, հակասական հակումների եւ զանազան հայեցողութիւնների միջոց: Յամենայնդէպս այս հակասական դիրքերը պարսիկ գրականութեան մէջ որոշակի են: Դա ճիշտ է, որ դիրքերը քաղաքականութեան աշխարհում մի առ ժամանակ է ինչ խախտել են, այսինքն ամեն ինչով է խախտուած, բայց պէտք է խոստովանել, որ գրականութիւնը չի ստում: Գրականութիւնն անկեղծ ու հարազատ աշխարհ է: Հետեւաբար գրականութիւնը յստակ է ու պարզ: Դարահատուած ամեն մի անձ իրովի է դիրքորոշում եւ ոչ առաւել: Արդի գրականութեան մի այլ առանձնալատկութիւնը կարելի է համարել հոռետեսութիւնը, եւ դա իրալատուկ չէ երիտասարդութեանը, Դեհիտոյան էլ էր հոռետես, Նիման էլ:

Իսկ այն անձինք են առաւել կրում տոյն առանձնալատկութիւնը, որոնք չեն կապում գերութիւն, եւ գտնուելով ժամանակակից դժարութիւնների ընդերքում, այնտեղից են գոռում...

Արդի գրականութեան այլ իրալատկութիւնը մարդասիրութիւնն է: Ուժեղների նկատմամբ հոռետես լինելը պահանջում է՝ լաւատես լինել թոյլերի, այսինքն ճնշածների նկատմամբ: Դա նշանակում է ուշադրութիւն դարձել ժողովրդին: Գուցէ, այս տեսակետից է, որ արդի գրականութեան լեզուն մի քիչ համահունչ է ողբասացութեան: Բայց հանդէպ ամբոյսին եւ նրա լեզվին, տեղական բարբառներին, ժողովրդական ասացածքներին ուշադրութիւն ցուցաբերելը, հենց այդ մարդասիրական դրսեւորումներից է: Մեր օրերին, գրողը կամ բանաստեղծն էլ անգամ չի կարող խեղկատակել, թէ ինքը գրում է իր շաքի համար:

Արդի գրականութիւնը ունի իր սահմանած տիրոյթը, շուկան, եկամուտը, եւ իր մատենաների ու ժողովածուների արտաքինով՝ համեստ է ու գոհունակ իր վիճակից:



Շար. էջ 18-ում

Մանկական

Գող քոթոթը (առանց «բ» տառի)

Մի անգամ արջի քոթոթը ծնողներից թաքուն գնում է մեղուների փեթակներից մեղր գողանալու: Մօտենում է փեթակներին, իսկ մեղուները չեն երեսում: Քոթոթը շատ է ուրախանում:

-Ուրեմն եկել եմ ճիշտ ժամանակին, մեղուները ըստ երեսոթին գնացել են աշխատանքի,- մտածում է քոթոթը:

Քոթոթը թաքը երկարացնում, մտցնում է փեթակի մեջ, եւ ա՛յ քեզ հրաշք, փեթակը լիքն է մեղրով: Քոթոթը որ դրան էր սպասում, ուզում է դուրս հանել ու համով մեղրը լսատել, մէկ էլ յանկարծ մեղուները դուրս են թափում եւ յարձակում: Քոթոթը շփոթած փախչում է: Դա դաս է լինում քոթոթին, որ միւս անգամ մենակ մեղր գողանալու չգնայ:

Առաջադրանք

Փորձիր գրել մի նախադասութիւն, առանց «բ» տառի:

Գրում են մեր աշակերտները

Հայաստանից գաղթող հայերին

Երկրներ կան Հայաստանից

Աւելի շէն, արդիական.

Բայց նրա ամուշ բուրմունքը չունեն,

Նրա կանչող ու հարազատ

Ձայնը չունեն:

Ո՞ր ես գնում դու անհոգ մարդ

Պապենական Հայրենիքից,

Գլուխ հանում Ամերիկայից,

Անգլիայից, Գերմանիայից:

Ի՞նչ ես տեսել Հայաստանից,

Որ փախչում ես դու նրանից:

Չե՞ս կարօտում Արարատին,

Մասիս սարին ու Մեամին:

Հայաստանից գաղթող դու հայ,

Լսի՛ր դու իմ խօսքը վերջին,

Ինչքան էլ, որ Հայաստանում

Գժար ապրես ու անհաճոյ,

Պապենական երկիրդ է այն

Ազգդ է ապրել սուրբ հողի վրայ:

Որ պահպանել, մեզ է հասցրել

Հայրենիքն անուշ ու սուրբ:

Ուստի մնայ եւ առաւել շէնացրու

Երկիրդ, հողդ պապենական,

Որ կանգուն մնայ մեր Հայաստանը

Ու փառապանծ հայոց ազգը :

Թադէ Յովհաննիսեան

1998 Շիրազ քաղաք

Եղջերուն եւ նրա ընկերը

Երիտասարդ եղջերուն ցանկացաւ ճանապարհորդել սոսիսի տեսել:

-Ես չեմ ցանկանում արգելել,- ասաց հայրը,- բայց իմացիր, որ դա քեզ համար հեշտ չի լինի, օտար տեղերում շատ դժարութիւնների կը հանդիպես:

-Ոչինչ... Ես մենակ չեմ գնում: Ինձ հետ է լինելու իմ ընկերը: Նա երբեք դժբախտութեան մեջ ինձ մենակ չի թողնի:

-Շատ լաւ է, որ դու այդպիսի ընկեր ունես: Դէ որեւէ բան պատմիր նրա մասին, տեսնենք ինչպիսին է նա:

-Մի անգամ մենք միասին գնում էինք լեռնային մեղ ճանապարհով: Յանկարծ տեսանք, որ ճանապարհը փակում է սարից գլորած մի քար: Անցնել անհնարին էր: Մակայն ընկերս առաջ անցաւ, ուսը դէմ տեց քարին ու այն գլորեց ձորը:

-Ուրեմն քո ընկերն ուժեղ է,- գովեց ծեր եղջերուն: - Բայց ես, միեւնոյնն է, քեզ համար անհանգստանալու եմ:

-Մի անգամ էլ,- շարունակեց երիտասարդ եղջերուն, երբ շրջում էինք գետափի թփերում, ցանկացանք ջուր խմել: Յանկարծ ընկերս զագագնի հոտ առաւ: «Մեզ վրտանգ է սպառնում», - շշմոջաց ականջիս, եւ մենք քամու պէս փախանք գետափից:

-Քո ընկերը խելօք է եւ զգոյշ:

-Ահա թէ ինչ պատահեց մի ուրիշ անգամ: Մենք հանգիստ նստած էինք անտառում: Յանկարծ տեսանք գայլը հետապնդում է մի ուլիկի եւ շուտով պէտք է հասնի նրան: Ի՞նչ ընկերը անտարբեր չմնաց: Նա դուրս թռաւ իր տեղից, կտրեց գայլի ճանապարհը եւ իր եղջիրներով այնպէս հարածեց նրան, որ քիչ էր մնում եղջիրները գայլի փորը մտնէին:

-Ա՛յ, դա ամենալաւ պատմութիւնն էր: Քո ընկերը ազնիւ ու համարձակ է,- ուրախացաւ ծեր եղջերուն: - Այժմ արդէն քեզ համար չեն անհանգստանայ: Այդպիսի յուսալի եւ հաւատարիմ ընկերոջ հետ վստահօրէն կարող ես ճամբորդել:

Հանելուկ

Գլխով ու մեջքով,

Շփում են նրանք,

Ու բերում են մեզ

Փոքրիկ մի կրակ:

վիճույ

Հողի շուրթն է

Նա բացել,

Դէպի երկինք

Մեպացել:

սգլ



Լրացրու խաչքառը

| | | | | | | | |
|---|---|---|--|--|--|--|--|
| Հ | ա | յ | | | | | |
| Հ | ա | յ | | | | | |
| Հ | ա | յ | | | | | |
| Հ | ա | յ | | | | | |
| Հ | ա | յ | | | | | |

Ջուրը

Ջուրը կեանք է, ջուրը ուժ,

Ջուրը մայր է քաղցրանուշ:

Ով ուզում է մեզ նման

Լինել առողջ ու աշխոյժ,

Ամռան շոգին թող գայ նա,

Մեզ հետ ջրում լողանայ:

Կազմեց Արմինէ Բարունեանը

Ինչպես գնահատել սրտի աշխատանքը

Health after 50
Անգլերենից թարգմ. Շահեն Յարության



Անցեալ տարի, 52 տարեկանում Late show (ուշ երեկոյեան շոու) հաղորդավար Դէյվիդ Լեթըրմանը, ում մասին խօսում է, ինչպէս jogging (համրաքայլ)-ի երկրպագուի եւ առողջ սննդակարգի հետեւող մէկի, կարիքն ունեցաւ ենթարկել սրտի թագերակների շրջանցային պատաստի (CABG) վիրահատման: Գործողութիւնը կատարեց այն բանից յետոյ, երբ պրն. Լեթըրմանը սրտի անգինա (կրծքավանդակի տուր ցաւ) զգաց jogging-ի ընթացքում: Անգինան հետեւանք է լինում սրտամկանին քիչ արիւն եւ թթւածին հասնելուն:


Նա անմիջապէս ենթարկեց մի քննութեան, որով չափում են սրտի աշխատունակութիւնը սրտի ծանրաբեռնութեան-ստրեսի տակ՝ մարմնամարզի պայմաններում եւ դրա արդիւնքը համեմատեց երկու տարի առաջ կատարած նոյն քննութեան հետ: Տեղի ունեցած փոփոխութիւնը ծայր աստիճանի դրամատիկ էր եւ նա, առանց յայտնման, ենթարկեց թագերակների (coronaries) պատկերագրման- անգիոգրաֆիայի (գործընթաց, որն մի մեղմ կորիզայի նիւթ- radio-isotope- սրկելով տեսանելի է դարձնում սիրտը սնող երակները իքս-ճառագայթի ժապաւեմի վրայ): Ժապաւեմը ցոյց տուց, որ թագերակներում գտնուում են լուրջ խցումներ: Կատարեց թագերակների շրջանցային պատաստում: Սա, վիրահատական մի գործողութիւն է, որի ընթացքում շրջանցում է թագերակների ախտահարած մասը, պատաստելով կրծքի մի շնչերակ կամ սրունքից առնուած երակի կտորներ եւ այսպիսով արեան հոսքի համար նոր ուղիներ բաց անելով: Մինչ արեան խոլեստերոլի մակարդակի ճնշումը, սրտանօթային հիւանդութեան տեսակետից համարում է միակ անհրաժեշտ քննութիւնը 50-ից վեր եւ ախտանիշներից զուրկ անհատների համար, ապա ինչո՞ւ պրն. Լեթըրմանի պարագայում, առաջին իսկ հերթին դիմեցին մարմնամարզի ընթացքում կիրառուած քննութեանը: Պատասխանը ընտանիքի բժշկական անցեալն է: Պրն. Լեթըրմանի հայրը 50+ տարիքում մահացել էր սրտի կաթւածքով:

Սրտանօթային դրածքի հոգատարութեան տեսակետից, ընդհանրապէս, խոլեստերոլի քննութիւնը- Ֆիզիկական եւ բժշկական անցեալի լիակատար քննարկման հետ միատեղ- կանգնած է կանխարգելիչ քայլերի առաջին դիրքում: Մակայն, երբ կան մտահոգիչ խնդիրներ, օրինակ՝ անժին, շնչահեղձութիւն, կամ ռիսկային այլ ազդակներ, ինչպէս ընտանեկան նախադէպ, առաջացած տարիք, արեան զերճնշում, բարձր խոլեստերոլ, զիրութիւն, կամ ծխախոտի ազդակ, ապա յանձնարարում է դիմել գնահատական յաւելեալ քայլերի:

Առաջին քայլ

Սրտի հիւանդութեան կասկածի դէպքում ամենից շատ պատիւրած գնահատական տեսող էլեկտրոկարդիոգրա-

ֆիան-(ECG), իսկ էլեկտրոկարդիոգրամը առաջին հետքագրուած պատկերը: Այս տեսող, մաշկի վրայ տեղադրուած փոքրիկ շօշափուկների- էլեկտրոդ-օգնութեամբ ցոյց է տալիս սրտի էլեկտրական գործունեութիւնը: Այն մի անգնահատելի չափանիշ է սրտի անկայուն ռիտմի (arrhythmia) տեսակետից, բայց նաեւ կարող է ցոյց տալ սրտի կաթւածի եւ կամ սրտանօթների նեղացման հետեւանքով սրտին հասած վնասածքը: ECG հնարաւոր է կատարել թէ հանգստեան պահում եւ թէ մարմնամարզի ընթացքում: Առաջին հերթին պատկերում է հանգստեան պահի ECG, քանի, որ դա առաւել յարմար եւ համեմատաբար էժան տեստ է: Մակայն, շիճեղով բաւականաչափ զգայուն՝ ունի սահմանափակ օգտաւտութիւն եւ շատ են լինում ստացուած կեղծ-բացասական արդիւնքներ, այսինքն սրտի եւ երակների վնասածութեան պայմաններում էլ արդիւնքը նորմալ է լինում: Կեղծ-բացասական արդիւնք յաճախ է ստացուում, որովհետեւ սրտամկանի *խլթմիան* (անբաւարար թթւածին) միայն այն դէպքում է երեւան գալիս, երբ սիրտը գտնուում է ծանր աշխատանքի տակ: Տեստի արդիւնքների մօտաւորապէս 50 տոկոսը լինում է կեղծ-բացասական եւ առաւել յաճախ տեսնում է կանանց քան թէ տղամարդկանց մօտ:



Ֆիզիկական ծանր աշխատանքի ընթացքում կատարուած ECG-ն, ճանաչուած է stress test կամ master's test անունով եւ կատարում է ենթակայի մարզանք անելու ընթացքում: Այդ նպատակի համար, սովորաբար օգտագործում է մի շարժուն գօտեհարթակ (treadmill), որի վրայ քայլում է հիւանդը: Գօտեհարթակի արագութիւնը եւ զանոյնիւնի աստիճանը գնալով շատացնելով արձանագրում է սրտի բարբախման եւ շնչառութեան արագութիւնը, արեան ճնշումը եւ սրտի էլեկտրական գործունեութիւնը (ինչպէս նաեւ ստուգում է յոգնածութիւնը եւ կրծքավանդակում ցաւի զգացողութիւնը): Արդիւնքը ցոյց է տալիս, թէ որքանով է բարեյայտը աշխատում սիրտը, երբ պահանջում է ստելի ուժգին գործել: Այս տեստի արդիւնքն օգտագործում է հաստատելու սրտանօթային հիւանդութեան առկայութիւնը, սահմանելու մարմնամարզի ապահով մակարդակ (երբ ախտորոշում է սրտի հիւանդութիւն) կամ էլ ընտրելու բուժման կարգ, այնպիսի հիւանդների համար, ովքեր արդէն անց են կացրել սրտի հարածի միջադէպ եւ այժմ գտնուում են լիովին կայունացած իրավիճակում:

Ըստ ամենայնի, դժուար է տեստի արդիւնքը մեկնաբանել: Կեղծ-բացասական արդիւնքները լինում են 15-20 առ հարիւրի սահմաններում: Բայցի այդ, մարմնամարզով ծանրաբեռնուած սրտի տեսող ունենում է կեղծ-դրական արդիւնքների բաւականին բարձր չափաբաժին, այսինքն շատ է լինում ոչ-նորմալ արդիւնք, հիւանդութեան բացակայութեան պայմաններում: Կեղծ-դրական պատասխանը առաւել հստակական է կանանց եւ հիւանդութեան թոյլ ռիսկի տէր անձանց մօտ:

Լրացուցիչ քայլեր

Եթե հանգստի կամ մարմնամարզի պահին կատարված ECG-ն երկդիմի արդյունք է տալիս, կամ վճռական ախտորոշումի համար հարկ է զգացում յառեկալ տեղեկանքի, ապա վարը ճշտված պատկերագրական տեստերը յաճախ նպաստում են նման տեղեկանքի ձեռքբերմանը:

ա) *Էխոկարդիոգրաֆիա (Echocardiography)*- Լինելով խիստ զգայուն մի տեխնիկա է ունենալով կեղծ, խաբուսիկ պատասխանների ցածր մակարդակ էխոկարդիոգրաֆիան նպաստում է ախտորոշել սրտի դոնակների անկարգությունները, սրտամկանի վնասածությունը, ձախ դահիճի ծառայի յառելումը (սրտի մեծանայ), խրոնիկ բրոնխիտը, անֆիզեման ու ի ծնե սրտի ախտերը:

Տեստի ընթացքում, օգտվելով գերձայնային ալիքներից, ստացվում է պատկերագրում (imaging) սրտի շարժումների ընթացքում: Այն ցոյց է տալիս սրտի չափը, դահիճների ձևը, դահիճների եւ դոնակների գործունեությունը եւ սրտի իրաքանչիւր զարկի հետ մղած արեան ծառայը:

Էխոկարդիոգրաֆիան նաեւ կարող է յայտնաբերել մակարդած արեան առկայութեան սրտում եւ երբեմն էլ սպիացման հետքեր:

բ) *Կորիզային պատկերագրում*- Դա մի տեստ է, որի օգնութեամբ հնարատր է ճշտորոշել թէ որքանով է արիւնը բարեկարգող հոսում սրտամկանում: Կորիզային պատկերագրումը կատարում է մի թոյլ ռադիո-ակտիւ նիւթ սրկելով երակի մէջ եւ շահարկելով համակարգչով ծրագրատրած հետազոտություններ կամ այլ տեխնոլոգիաներ, ձեռք է բերում համապատասխան պատկերագրում: Ի յառելում շնչերակներում որեւէ հաւանական խցման կետերի եւ ընդհանուր առմամբ սրտային վնասւածքի յայտնաբերման, կորիզային պատկերագրումը կարող է մատնանշել վնասւածքի վայրը եւ տարածւածությունը, ինչպէս նաեւ նախատեսել հետագայ սրտի հարւածի հաւանականութիւնը: Տեսող վերին աստիճան ճշգրիտ է եւ արդիւնաւետ թէ կանանց եւ թէ տղամարդկանց պարագայում:

Պատկերագրական վերոնշեալ երկու տեստերն էլ կատարում են նախ հանգիստ պահին եւ ապա մարմնամարզի ընթացքում: Իսկ երբ ենթակայի համար կամ հնարատր չի լինում մարմնամարզը, սրկելում է մի դեղ, որն *կապկում-միսիկում* է մարմնամարզի թողած ազդեցութիւնը: Դեղամիջոցի օգնութեամբ կատարող տեսող յանձնարարում է բոլոր նրանց, ովքեր չեն ցանկանում կամ չեն կարող Ֆիզիկական բարար գործունեութիւն ցուցաբերել մարզանքով ծանրաբեռնւած տեստի ընթացքում: Սովորաբար այդ լինում է տարիքի, տկարութեան, յոդակապի, սրտանօթային հիւանդութեան, անդամահատութեան, արտակարգ գիրութեան կամ առողջապահական այլ խնդիրների պատճառով, իսկ կանանց պարագային համարում է ամենաճիշտ մօտեցումը:

Անժիոգրաֆիայի դերը

Թագերակների խցումը ախտորոշելու ոսկեայ չափանիշը համարում է անժիոգրաֆիան (angiography): Մոյն

քննութիւնը յանձնարարում է այն պայմաններում, երբ խիստ հաւանական է թում թագերակների հիւանդութիւնը՝ հիմնադրւած ախտանիշների եւ այլ տեստերի արդիւնքներով:

Տեսող մի նախապայման է *անժիոպլաստիայի* (angioplasty) համար, որը խցւած երակի վերաբացման գործողութիւնն է մի փուչիկանման խողովակի օգնութեամբ:

Անժիոգրաֆիային ուղեկցում է փոքրիկ ռիսկ, որն է սրտի կաթւած հազարի մէջ մի անգամ: ■

Չալալ Ա Անճաղի... Ծար. էջ 15-ից

Մի այլ նկատառումով, ժամանակակից գրականութիւնը, նախկին քսան տարիների ընթացքում կատարած բազմաթիւ թարգմանությունների շնորհիւ, բաւականաչափ փոփոխութեան է ենթարկել, լեզուն՝ հարստացնելով, աշխարհահայեացքները՝ լայնացնելով եւ կործքերը՝ բացելով: Եւ եթէ ընդունենք, որ գրողներից ու բանաստեղծներից շատերը արեւմտեան գրականութիւնից էլ են թարգմանություններ կատարել, ապա կանդրադառնանք այդ ազդեցութեան կարեւորութեանը: Ինձ անձամբ շատ է պատահել, այս-ինչ բանաստեղծութիւնն կամ այն-ինչ արձակ կարդալիս, այն-ինչ արեւմտեան գրողի եւ իր գրքի հետքն են նրանում նկատել: Եթէ նման ազդեցութիւն, իրային գրողին կամ բանաստեղծին ընձեռնում է կծիկի ծայրը, դա թոյլատրելի է ու արժանատր, իսկ եթէ այնպէս լինի, որ կամենանք օտար ազգի ստեղծագործութիւնից ընդօրինակել, այդ դէպքում էլ ի՞նչ է նշանակում պարսիկ արդի գրականութիւն: Մի այլ կարեւոր նկատառում եւս, դա այն է, որ պարսիկ արդի գրականութիւնը ոճի նկատմամբ ուշադիր չէ: Ուշադրութիւն չի դարձրում բառի՝ արմատականութեանը, անադարտութեանը, մեկնաբանութեանը, եւ լեզուական սահուն կիրառմանը, նոյնպէս լեզուի սեղմութեանը եւ ընդհանուր առմամբ լեզուի պերճախօս ու դիպուկ լինելուն: Այդ թերութեան պատճառներից մէկը՝ ամեն ինչ գրելն ու ամեն գործ անելն է:

Նպատակս մի կերպ խառնափնթոր լինելն է, որ մեր ժամանակակից գրչատերերի գլխին փորձանք է դարձել: Բողոքս զբաղւած ենք ամեն գործ անելով, որովհետեւ գրաքննադատութիւնն իր բուն իմաստով գոյութիւն չունի, հետեւաբար «քննադատ» էլ ենք դառնում: Օրինակ՝ քանի որ թարգմանութեան համար լաւ են վճարում՝ եւ նաեւ թարգմանություններ են անում: Ինչպէս գիտէք այս օրերին կինօնկարահան ընկերութիւններն էլ ճամբայ են ընկել: Նրանց համար էլ սցենար են գրում:

Այսպիսով գրականութեան ոլորտում, դեռեւս լիակատար մասնագէտ չի գոյացել: Բողոքս ամենագէտ ենք, ոչ մէկս մեր իսկ գործին չենք զբաղւում, աշխատելու ժամանակ աճապարում ենք, շատ ենք գրում եւ անելի քիչ ենք՝ նրբանկատութիւն դրսեւորում:

Եւ որպէս վերջաբան, համոզւած եմ, որ արդի պարսիկ գրականութիւնը, նորովի է մուտք գործել այս ուղին, եւ իր երիտասարդական ժամանակաշրջանն է անցկացնում, իսկ դեռեւս եթէ փորձառւած չէ եւ թերութիւններ ունի, յուսալիցաբեր ենք, քանի որ երիտասարդական սնապարծութիւնը ամեն մի դէմքի վրայ թողնում է իր բժաւոր հետքը:

Պարսկերէնից թարգմանեց Նիկիտ Սիրզայեանը

Ժամանց



Խոհարարական հնարամտություններ

Եթե պատրաստում եք սոխը տապակել, այն քաթա-խեցեք ալիսի մեջ, սոխը կը ստացվի ոսկեգոյն եւ չի վառի:

☆☆☆

Սոխը լաւ կը կարմրի, եթէ իւրին աւելացնէք մի քիչ շաքարաւազ:

☆☆☆

Եթէ դուք ուզում եք սալաքին աւելացնել գոլիս սոխ, ապա մանր կտրտեք այն, լցրէք քամիչի (քափկիր) մէջ եւ շփեք եռման ջրով: Այդպէս աւելի համեղ է:

☆☆☆

Սալաքի մէջ շատերն են սիրում սխտորի համ: Դրա համար սալաքի մէջ գցում են սխտորով քերած աշորայի հացի կեղեւ: Այնուհետեւ հացը հանում են, քայց զգացող հոտը մնում է:

☆☆☆

Որպէսզի արագացի ճակնդեղի եփումը, անհրաժեշտ է եփել 1 ժամ, որից յետեյ հանել եւ 10 բուլէ սառը ջրի շի-քի տակ:

☆☆☆

Յաղթողները եւ պարտողները

Ս.Ջ. Շարիս

Թարգմանեց Գագիկ Անդրեասեանը

Յաղթողը մանրամաս դժարութիւնները ուսումնասիրում է:

Իսկ պարտուողը դժարութեան կողքից անցնում եւ այն թողնում է չլուծած:

☆☆☆

Յաղթողն ասում է. «Եկ դժարութեան համար որեւէ մի ելք գտնենք»:

Իսկ պարտուողն ունի մի նշանաբան՝ «Ոչ ոք, որեւէ ելք գտնել չի կարող»:

☆☆☆

Յաղթողն իմանում է ինչի համար է պայքարում եւ ինչի վրայ պիտի համաձայնութեան գալ ու համերաշխութեան հասնել:

Իսկ պարտուողը այնտեղ, ուր պետք չէ համերաշխութեան է հասնում եւ պայքարում է անարժէք բաների համար:

☆☆☆

Յաղթողը սխալը ուղղելով, իր ցամ ու զոջումն է արտայայտում:

Իսկ պարտուողն ասում է. «ցատում եմ», քայց էլի նոյն սխալն է կրկնում:

☆☆☆

Յաղթողը գովեստի արժանանալը գերադասում է սիրելուն, թէւ երկու հանգամանքն էլ նկատի է առնում:

Իսկ պարտուողը սիրելը գերադասում է գովեստին, նոյնիսկ նուաստացման ու ստորացման գնով:

Ծիծաղը բուժելու ամենալաւ միջոցն է

Թոչում է ազտար..

Յանկարծ գլխով հարածում է ծառին եւ ընկնում: Սի կերպ ոտքի վրայ կանգնելով ասում է.

-Ինչ լաւ է, որ ուղեղ չունեմ, թէ չէ ուղեղի ցնցում կըստանայի:

☆☆☆

Երկու ոճ դուրս են գալիս ռեստորանից:

Նրանցից մէկը հարցնում է.

-Ի՞նչ ես կարծում, ես թունաւոր եմ, թէ՞ ոչ:

-Թունաւոր ես,- պատասխանում է երկրորդը:

-Պարզ է, ուրեմն վերջս եկել է, ես լիզում կծեցի:

☆☆☆

-Դուք դեմ չէ՞ք, արդեօք, եթէ մենք վաղը միասին ընթրենք:

-Իհարկէ՛, մեծ սիրով:

-Այդ դէպքում կը հանդիպենք վաղը ժամը ութին, ձեր տանը:

☆☆☆

-Ի՞նչ է նշանակում բարձր արագութիւն:

-Վազել տան շուրջ բոլորը այնքան արագ, որ պատի անկիւնից տեսնես քո քամակը (հետոյքը):

☆☆☆

Քննիչը հարցնում է:

-Դուք ճանաչո՞ւմ եք այս դանակը:

-Իհարկէ:

-Ուրեմն հաստատ ճանաչում եք:

-Իէ՛ իհարկէ ճանաչում եմ, չէ՞ որ դուք այդ դանակը արդէն երեք շաբաթ է ամէն օր ցոյց եք տալիս:

☆☆☆

Կակազողը մտնում է խանութ.

-Ն ո ն ե ր եցեք... u ս սե... իկրա ուունէ՞ք:

Ոչ քաղաքացի: Իսկ կարմիրի մասին էլ չհարցնէք: ■

Խաչբառ համար 22-ի լուծած տարբերակը

| | | | | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | յ | ա | դ | ք | ա | ն | դ | ա | ճ | | ա | ճ | ա | յ | ի |
| 2 | ա | ր | ա | | ր | | ա | ր | ա | ր | չ | ա | կ | ա | ն |
| 3 | դ | ա | ր | ա | ք | ի | լ | ի | ս | ա | | ն | զ | ն | ի |
| 4 | ք | ր | ա | տ | ե | լ | | ա | շ | տ | ա | ր | ա | կ | |
| 5 | ե | | ք | ա | պ | տ | ի | ս | տ | | կ | ա | յ | | ք |
| 6 | լ | ց | ա | կ | ի | ր | | ի | ա | | ա | ճ | | զ | ա |
| 7 | | ա | դ | | ս | ա | ր | ք | ա | ն | ա | կ | ե | լ | |
| 8 | ա | յ | | ի | կ | ա | ր | տ | | ճ | ա | ս | ա | ր | |
| 9 | ն | ր | ա | | ռ | ր | ճ | ա | տ | ն | ն | ք | ա | լ | |
| 10 | կ | ա | ր | ա | պ | | ա | ր | ն | ժ | | | ա | պ | ի |
| 11 | ա | յ | | կ | ո | ն | տ | | հ | ա | ր | ե | լ | ա | ն |
| 12 | տ | ե | զ | | ս | ի | ա | ճ | ա | ն | ք | օ | | տ | ա |
| 13 | ա | դ | ի | ք | | չ | կ | ա | ճ | | ե | ճ | ի | | |
| 14 | ր | | ր | ո | պ | է | ա | կ | ա | ն | | ք | ա | լ | ա |
| 15 | | ա | ք | ր | ա | | լ | ա | ր | ա | հ | ա | տ | | ճ |

ԽԱՉԲԱՌ ՀԱՄԱՐ 23

Կազմեց
Գագիկ Անդրեասեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1-Կուտակութիւն ջրի ամենամանր գրնդակների՝ գետնի մակերեսի մօտ- մի վանկից բաղկացած:
- 2-Մի տեսակ բոշոմ- դեռահաս, առոյգ, կայտառ- մի տեսակ պտուղ:
- 3-Հաղորդակցութեան միջոցներից- չհասած, տհաս-երկչոտ, ոչ սրտոտ:
- 4-Ինչ որ իրօք կայ- «ի» գրի անունը- օժանդակ բայ է:
- 5-Կարողութիւն չունեցող- յոգնակի չէ:
- 6-Ագռաի բացազանչութիւնը- աղմուկ, աղաղակ, շփոթութիւն (բարբառային):
- 7-Աջից՝ գրութեան հին ձեւ, որ բաղաձայնից առաջ հնչում էր մօտաորապէս ինչպէս «Օ»- հողմ- բոլոր բերից առաջինը- ցուցական դերանուն:
- 8-Արագասահ լոյս եւ շանթ- մի տեսակ պտուղ- մայր բառի կրճատում կոչւած ձեւ:
- 9-Թանգակին քար- հետեւ չէ- ոտք, սրունքով միասին (պահած է մի քանի գաւառներում)- իզական անուն:
- 10-Կերակորի համեմներից- Կոտտանդնուպոլիս քաղաքի բնակիչներ:
- 11-Ռուս յայտնի գրող եւ արեստագէտ- ցիրուցան անել, ցրի տալ- ըստ հին կտակարանի՝ առաջին մարդը:
- 12-Տարի- արական անուն- նոյն իլիկն է- առեւտրական անձ կամ հիմնարկ, որ ձախորդութիւնների պատճառով անկարող է պարտքերը վճարել:
- 13-Պատերազմական նաւ- ծուլութիւն, անհոգութիւն:
- 14-Անվախ, աներկիւղ- չաղած կամ քիչ աղած:
- 15-Յաւելւած կտոր՝ իր, որ կցում են ուրիշ իրի ծայրին- արական անուն- ցուցական դերանուն:

Ժամանց

| | | | | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | | | | | | | | ■ | | | | | | | |
| 2 | | | | | | | ■ | | | | | ■ | | | |
| 3 | | | | | | ■ | | | ■ | | | | | | |
| 4 | | ■ | | | | | | | ■ | | | | ■ | | |
| 5 | | | | | | | | ■ | | ■ | | | | | |
| 6 | | | ■ | | ■ | | | | | | | | | ■ | |
| 7 | ■ | | ■ | | ■ | | | | | ■ | | | ■ | | |
| 8 | | | | | ■ | | | | | | | ■ | | | ■ |
| 9 | | | ■ | | | | | ■ | | | | ■ | | | |
| 10 | | ■ | | | ■ | | | | | | | | | | |
| 11 | | | | | | ■ | | | | | | ■ | | | |
| 12 | | | ■ | | ■ | | | | ■ | | ■ | | | | |
| 13 | | | | | | | | | ■ | | | | | ■ | |
| 14 | ■ | | ■ | | | | | ■ | | | | | | | ■ |
| 15 | | | | | ■ | | | | | | | ■ | | | ■ |

ԼՈՒԾԵՔ
ԽԱՉԲԱՌԸ
ՍՏԱՅԵ
ՍԷՐ

Ուղղահայեաց

- 1-Հացահատիկների հնձելու գործիք- տրամայ կամ որեւէ մեքենայի կանգ առնելու վայր:
- 2-Անել բայի հրամայական եղանակը եզակի երրորդ դէմքի համար- փոքր նաւ- անձ նշանակող յոգնակի անորոշ դերանուն:
- 3-Հասարակ դասակարգին պատկանող մարդ- երկինչիւն է- մակերեսի չափման միասոր:
- 4-Մշակելի հող՝ բնակութեան եւ տնտեսութեան համար շինութիւններով- աման՝ ջրով, որի մէջ ծաղիկներ են դնում:
- 5-Խելօք, իմաստուն- ասիական երկրներից:
- 6-Այծի ձագ- հաստ պինդ գերան, որը կապում է նախ կողքերը իրար հետ- մի տեսակ մետաղ:
- 7-Խաղալու ձեւ- հիմա, այժմ:
- 8-Մաժունի կամ սերուցքի մնացորդը՝ կարագը հանելուց յետոյ- ցածից՝ ջրայի ցելս- ամբողջութեամբ, լիովին:
- 9-Միացեալ ազգերի կազմակերպութիւն- տարի- Անգլիայի յայտնի գրող եւ փիլիսոփայ- ժխտական նախածանց:
- 10-Ռրելէ բան, անշունչ առարկայ- մեղմել, բարեխառնել- Հայաստանի հին մայրաքաղաքներից եւ նոյնպէս իզական անուն:
- 11-Ամաններին առնչող- ժամացոյցի կողմնացոյց (տառապիսալով):
- 12-Հին ժամանակի պատերազմական զէնք- լիովին բաւականութիւն գտնել:
- 13-Խիտ գործած բրդէ կտոր- մուգ կարմիր- մի տեսակ պտուղ:
- 14-Գրիգոր Նարեկացու յորինած աղօթամատոյց գիրքը եւ նոյնպէս արական անուն- Հայաստանի հանրայայտ գեղանկարիչ:
- 15-Բուժական հիմնարկ- արմունկով խփել՝ հրել:

Խաչբառ համար 22-ի լուծւած տարբերակը տեսնել՝ էջ 19-ում:

Էջեր մարզաձևերի պատմութիւնից

Թենիս

Միգուցէ ապագայ հնագետներին ու պատմաբաններին յաջողի գտնել թենիսի նախապատկերներ, սակայն առայժմ ամենահաստիք ունեւորողը համարուում է միջնադարեան «ժէ դէ պոմ» խաղը: Այնպէս որ թենիսը սաստիկապէս մրցաշարերի հասակակիցն է եւ Լիւդովիկոս



Հայաստանի թենիսի հաւաքական խումբը

11-րդի պալատում այդ խաղով արեւի քիչ չեն հրապարակել, քան Բուրգունդեան ասպետների մենամարտերով: Հաւանաբար դա է պատճառը, որ թենիսը մեր օրերում պահպանել է իրեն բնորոշ խատուիւնն ու կիրք վարելակերպը:

«Ժաղերի թագուի» եւ «Արքաների խաղ» այսպէս անուանեցին Անգլիայում «ժէ դէ պոմը» հարիւրամեայ պատերազմի արարողից յետոյ, որը վերանուանեցին թենիս: Արքայական դղեակներում, անգլիական մեծահարուստների պալատներում արագօրէն կառուցեցին փակ խաղահրապարակներ, որոնք անուանեցին կորտեր, եւ ամբողջ երկու դար (15-16 դդ.) թենիսը մնաց արիստոկրատների ամենասիրելի խաղը: Մակայն փակած մնալով ազնականական շրջանակներում, խաղը աստիճանաբար կորցրեց իր հմայքը մոռացութեան մատուցեց:

... 1874 թականին մայր Ուիկոֆիլդը նոր խաղի պատեմտ է ստանում, որը կայծակնային արագութեամբ տարածում է երկրում եւ մեծ մասսայականութիւն ստանում: Դա թենիսն էր:

Ժամանակակից թենիսը, թերեւս միակ մարզաձեւն է, որն ունի աներեւակայելի հագեցած միջազգային մրցաշարային օրացոյց: Ճիշտ է, այս մարզաձեւի աշխարհի պաշտօնական առաջնութիւններ չեն անցկացւում, սակայն մի քանի մրցումներ իրենց ներկայացուցչութեամբ հաւասարագոր են աշխարհի առաջնութեանը:

Անհատական առաջնութեան կարեւորագոյն մրցաշար է համարուում Մեծ Բրիտանիայի բաց առաջնութիւնը (Ուիմբլդոնեան մրցաշարը, աշխարհի հնագոյն ազգային առաջնութիւնը, անց է կացւում 1877 թականից): Յիշեցնենք, որ Ամերիկայում անհատական առաջնութիւններ

սկսել են անցկացւել 1881, Աւստրալիայում՝ 1905 եւ Ֆրանսիայում՝ 1925 թականներից:

Յաղթել բոլոր այս մրցաշարերում, նախքան այսպէս կոչւած «Մեծ սաղաւարտը», մինչեւ 1977թ. յաջողել է միայն երկու թենիսիստի: 1938 թականին ամերիկացի Դոնալդ Բաջուին եւ 1956 թականին՝ արտրիալացի Ռոզնէյ Լէյքերին: Ի դէպ, աշխարհի ուժեղագոյն թենիսիստի իր կոչումը 30-ամեայ Լէյքերին հաստատեց նաեւ 1968 թականին, Ուիմբլդոնեան մրցաշարում, տանելով հոյակապ յաղթանակ: Այդ առաջնութիւնը յատկանշական էր նրանով, որ առաջին անգամ մրցաշարին մասնակցում էին թէ սիրող մարզիկներ եւ թէ պրոֆեսիոնալներ:

Մէկ այլ խոշոր մրցութեան նախաձեռնողը Ամերիկայի Հարարդի քոլէջի երիտասարդ շրջանաւարտ, տաղանդաւոր թենիսիստ Դեւիսն էր, որը ցանկանում էր հանդիպել չեմպիոնների չեմպիոն, Անգլիայի թենիսի աստղ՝ Ռեջի Դոերթինի հետ, որը 1898 թականին անգլիական մրցոյթում յաղթել էր նրան: Հանդիպման համար սահմանեց մի մրցանակ. «Արծաթէ սալաքաման»:

1900 թականի փետրարի 21-ին անգլիացիները ընդունում են մրցահրաւերը, սակայն Դոերթին Ամերիկայի ժամանում:


Դեւիսը եւ նրա թիմակից Ուիթմենը 3:0 հաշւով փայլուն յաղթանակ են տանում անգլիացիների նկատմամբ եւ նախնային զուարթ:

Այսպէս ծնեց Դեւիսի գաւաթի մրցաշարը, որն այժմ համարուում է աշխարհի ոչ պաշտօնական առաջնութիւն:

1901 թականից մրցումները արեւի ներկայացուցչական դարձան եւ վերածեցին խոշոր մրցաշարի, որին



Անդրէ Աղասի



Սարգիս Սարգսեան

մասնակցում են բոլոր մայր ցամաքների ուժեղագոյն թիմերը: Դեւիսի գաւաթը բոլորից շատ նախնային է արտադրալիցիները, ամերիկացիները, անգլիացիները եւ Ֆրանսիացիները:

Հարկ է նշել, որ այսօր թենիսի համար 1 թենիսիստն է ճանաչուում հայ ազգի Անդրէ Աղասին (ծնունդով՝ իրանահայ): Հայաստանի թենիսիստների ներկայացուցիչ՝ Սարգիս Սարգսեանը մինչ այժմ մասնակցել է տարբեր միջազգային մրցաշարերին եւ տպաւորիչ յաղթանակների արժանացել: ■

Ինչպես են առաջացել այս տեղանունները

Կամսար Աւետիսեան


Գալիա-Ֆրանսիա

Այս անուններով յայտնի է Արեւմտեան Եւրոպայի նշանաւոր պետութիւններից մէկը՝ Ֆրանսիան, որի անունների առաջացումը ունի այսպիսի պատմութիւն: Նախ Գալիայի մասին:



Գալիան (Գաղիան) Ֆրանսիայի հին եւ դասական անւանումն է: Չէ որ ներկայ Ֆրանսիացիները այն ժողովուրդների հետնորդներն են, ուրում հնում բնակւում էին Ֆրանսիայի ներկայ պատմութեան մէջ յայտնի են եղել գալեր անւան տակ: Այս ժողովրդին հռոմէացիները կուարար են համարել: Յատկապէս, յաճախակի են եղել ընդհարումները առանձին ցեղերի միջեւ: Այս համբարը հիմք է ծառայել գալուս՝ աքաղաղ մակդիրը տալ: Ի դէպ, լատիներէնում աքաղաղը գալուս է կոչում: Այսօր էլ Ֆրանսիայի գեր-քի վրայ աքաղաղ է պատկերւած:

Յուլիոս Կեսարի օրօք, առաջին դարում (մ.թ.ա.) Հռոմը նաճեց Գալիան: Գալիայի նւաճումը պատմա-բանները իրաւացիօրէն դիտում են որպէս Եւրոպայի յայտնագործում, որպէս նը-րա կենտրոնական մասի նւաճում: Կեսարի նւաճման հետեւանքով Ֆրանսիա-յում տարածեց ռոմանա-կան լեզուն եւ մշակոյթը:



Հետագայում արեւելեան կողմից ներխուժեցին գերմանական մի շարք ցեղեր, որոնցից առաւել յայտնի էր Ֆրանկ ցեղը, որը երկրին տւեց իր անունը: Ի դէպ, այդ անունը լատիներէն «Ֆրանկուս» բառից է, որը նշանակում է «ազատ», «անկաշկանդ»:

Այդ հասարակ անունն էլ տարածեց ժողովրդի եւ երկրի վրայ:

Չնայած Ֆրանկները ձուլեցին տեղական ժողովուրդների հետ, սակայն որպէս ժառանգութիւն երկրին թողեցին Ֆրանսիա անունը: Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, Ֆրանսիա անունը առաջ է եկել գերմանա-կան Ֆրանկ ցեղի անունից, որոնք հինգերորդ դարի վերջին նւաճեցին երկիրը:

Այսպիսով, Գալիա անւանը փոխարինեց Ֆրանսիա անւանումը: Այդ տեղի ունեցաւ 10-րդ դարի վերջին, այն է՝ 987 թականին, երբ երկրի համար պաշտօնապէս ընդունեց Ֆրանսիա անունը:

Ինչ վերաբերում է Գալիա անւանմանը, ապա դա երկար ժամանակ մեզ մօտ պահպանեց, յատկապէս արեւմտահայ դասական գրականութեան մէջ:

Պորտու-Գալէ-Պորտուգալիա

Պորտուգալիա անւան առաջացման պատմութիւնը այսպիսին է: Ինչպէս յայտնի է Պորտուգալիան Պիրենէյեան թերակղզու վրայ գտնուող երկրներից է, որը ըզբաղեցնում է համանուն թերակղզու հարաւ-արեւմտ-եան մասը: Գրաւում է 92 հազար քառակուսի կիլո-մետր տարածութիւն, որն ունի մօտ 10 միլիոն բնակիչ:

Պորտուգալիա անւան առաջացման պատմութիւնը մեզ հասցնում է միջնադարեան Եւրոպա, այն էլ այն ժամանակաշրջանը, երբ Իսպանիան եւ Պորտուգալի-ան իրենց հայրենիքը ազատագրում էին մարերից (արաբներից), որը պատմութեան մէջ յայտնի է ռեկոնկիստա անւան տակ: Ի դէպ, ռեկոնկիստա նշանակում է ետ նւաճել:

Պիրենէյեան թերակղզին մարերից ազատագրելով վերակենդանանում էին տեղական իշխանութիւնները: Դրանցին մէկն էլ եղաւ ներկայ Պորտուգալիան, որը հռոմէացիներից ժառանգած անունով շարունակում էր Լուզիտանիա կոչւել:

Ներկայ Պորտուգալիան, այսինքն այն ժամանա-կւայ Լուզիտանիան, անկախ իշխանութիւն դարձաւ 1094 թականին, որի մայրաքաղաքն էր Պորտու-Գալէ նւաւահանգիստը: Այդ քաղաքը ներկայումս յայտնի է Պորտու կամ Օպորտո անունով, որը գտնւում է Դորու



(Դուերո) գետի գետաբերանում, Բիսկայան ծոցի ափին:

Պորտո անունը առաջացել է լատիներէն պորտուս՝ «նւաւահանգիստ» բառից: Պորտուսն հին հռոմէացիներ-ի Պորտու-Գալէ նւաւահանգիստն է, որը բառացի նը-շանակում է «տաք նւաւահանգիստ»:

Պորտու քաղաքը մեծ դեր խաղաց Պորտուգալիա պետութեան ձեւաւորման գործում, ինչպէս նաեւ Պորտուգալիա պետութեան անւանման գործում:

Ի դէպ, եւրոպական շատ լեզուներում Պորտուգալիան ուղղակի «Պորտուգալ» է կոչւում:

Հետագայում, Պորտուգալէ անւանմանը աւելացեց «իա» մասնիկը, որը երկրի իմաստ ունի եւ դարձաւ Պորտուգալիա:

Ինչ վերաբերում է Պորտու քաղաքին, ապա այն յայտնի դարձաւ առանց «գալէ» մասնիկի, ուղղակի Պորտու կամ Օպորտու անունով, իսկ ժամանակի ընթացքում մայրաքաղաքը տեղափոխուեց Լիսաբոն: ■